Ազգ
Azg
25 ՅՈՒԼԻՍ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 134(4986)

# Ամենայն հայոց կաթողիկոսը մեկնեց Իտալիա, ապա կմեկնի Ռումինիա

Յուլիսի 24-ին Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Իտալիա:

Այցի ընթացքում Նորին սրբությունը հանդիպումներ կունենա Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու իրենց կողմից ստանձնած Մայր աթոռի տարբեր ծրագրերի ընթացքը:

Օգոստոսի 10-ին Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական այցով կմեկնի Ռումինիայի հայոց թեմ, որտեղ կհանդիսապետի Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին վանքի վերաօծման արարողությունը եւ հիմնադրման 500-ամյակի տոնակատարությունները:

# ՌԴ Պետական դումայի նախագահը Երեւանում



Գիտությունների ազգային ակադեմիայում առավոտյան սպասում էին Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի նախագահ **Սերգեյ Նարիշկինին**: Նրա գլխավորած պատվիրակությունը ակադեմիայում էր ցերեկը ժամը 12-ին: Հանդիպման նպատակն էր ուղենշել հայ ե ռուս գիտնականների միջեւ գիտատեխնիկական կապերի զարգացման եւ գիտության տարբեր ոլորտներում համագործակցության հնարավորությունները:

Մինչ գիտական հարցերի քննարկումը Նարիշկինը բացման խոսքում անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին՝ շեշտելով, որ Ռուսաստանի նպատակն է խնդրի խաղաղ եւ վերջնական լուծումը: «Հույսով ենք, որ առաջիկայում Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման բանակցային գործընթացում դրական տեղաշարժ կնկատվի: Ռուսաստանն իր հերթին շարունակելու է միջնորդությունն ի նպաստ այդ հակամարտության խաղաղ եւ երկու կողմերի համար ընդունելի լուծման», ասաց նա:

Տես էջ 8

ԲԱՔՈՒ

# «Նախընտրական ծրագիր»՝ առանց Լեռնային Ղարաբաղի

Իլհամ Ալիեւի պաշտոնական կայքէջում /www.president.az/ տեղադրվել է «Ադրբեջան- 2020. հայացք ապագային» վերնագրով մի ծավալուն փաստաթուղթ: Ըստ ամենայնի, դա կարելի է համարել գալիք հոկտեմբերին կայանալիք նախագահական ընտրությունների քարոզարշավի մեկնարկ: Այդ կերպ իշխանությունը փորձում է համոզել, որ «անցյալ դարի 90-ականների երկրորդ կեսին «համազգային մեծ առաջնորդ» (չակերտները մերն են- Վ. Ա.) Հեյդար Ալիեւի շնորհիվ Ադրբեջանում հաղթահարվել է պետական համակարգի փլուզման սպառնալիքը, իսկ հետագա տարիներին արձանագրվել է առաջընթաց»:

Դիտարժան է, որ բոլոր տվյալների համար մեկնակետ է վերցված 2003 թվականը, երբ Իլհամ Ալիեւը «ընտրվել է» նախագահի պաշտոնում: Դա հիշեցնում է խորհրդային վիճակագրությունը, երբ երկրի «անշեղ զարգացումը» փաստարկվում էր 1913-ի համեմատ արտադրված տրակտորների քանակով:

Փաստաթուղթը ուշադրության է արժանի հատկապես նրանով, որ այնտեղ ոչ մի խոսք չկա ո՛չ ղարաբաղյան հակամարտության, ո՛չ, առհասարակ, Լեռնային Ղարաբաղի մասին: Դա հատկապես աչքի է զարնվում այն ֆոնի վրա, որ այնտեղ մի առանձին բաժին հատկացված է Ադրբեջանի «ռեգիոնալ համաչափ զարգացմանը»: Ընդ որում, կից մեկնաբանության մեջ ասված է, որ «ռազմավարական ծրագիրը պետք է դառնա կառավարության առաջիկա տարիների գործունեության հիմնական ուղեցույցը»:

Կարելի է, այսպիսով, ենթադրել, որ Իլհամ Ալիեւը, նպատակադրված լինելով առաջադրվել նախագահի թեկնածու եւ հասարակությանը ներկայանալով բավական ամբիցիոզ ծրագրերով, այդուհանդերձ շրջանցել է Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Դա նշանակում է, որ նրա ընկալմամբ խնդիրը մինչեւ 2020 թվականը չի կարգավորվելու կամ լուծվելու է ոչ ի նպաստ Ադրբեջանի: Հակառակ դեպքում ի՞նչն էր խանգարում, որ եռամսյակը մեկ կառավարության նիստը նախագահող եւ «Շուշիում Ադրբեջանի դրոշը փողփողալու» մասին հայտարարություններ անող Իլհամ Ալիեւը գոնե մի քանի ընդհանուր բնույթի ձեւակերպումներով ներկայացներ ԼՂ խնդրի կարգավորման իր տեսլականը:

Ի դեպ, սույն փաստաթուղթն արդեն իսկ արժանացել է «Հանրային պալատ» կոչվող ընդդիմադիր կառույցի սուր քննադատությանը: Դիտարժան է, որ ընդդիմությունն էլ իր հերթին է շրջանցել ԼՂ հարցը եւ հիմնականում սեւեռվել տնտեսության դիվերսիֆիկացման, սոցիալական արդարության, մարդու իրավունքների եւ ժողովրդավարության հետ կապված հարցերի վրա: Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆանահ Հուսեյնովը «Հանրային պալատի» նիստում հայտարարել է, որ աշնանից պետք է ժողովրդավարական գործընթաց սկսել, որպեսզի «Իլհամ Ալիեւը երրորդ ժամկետով նախագահի թեկնածու չառաջադրվի»:

Կհաջողվի՞ «Հանրային պալատին» շարժել Ադրբեջանի ներքաղաքական կյանքի «ճահիճը», թե՞ ոչ, ցույց կտա ապագան: Ակնհայտ իրողություն է, սակայն, որ հարեւան երկրի թե՛ կառավարող, թե՛ ընդդիմադիր վերնախավը իր ապագա գործունեության առաջնահերթությունների մեջ ԼՂ խնդիրը չի տեսնում: Իսկ դա ինչ-որ բան նշանակում է:

Վ. Ա.

# Չմարսվող արցախյան ընտրություններ

### *Ի՞նչ են ասել Ադրբեջանի դեսպանությունը Շվեյցարիայում եւ ինչպե՞ս է Իրանը խուսում «բանակցությունները վնասելուց»*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երբ վերնախավի փոփոխություններ են տեղի ունենում տարբեր միջազգային կառույցներում, հատկապես այնպիսի կազմակերպություններում, որոնց այս կամ այն կերպ սերտ առնչություն ունի կամ Հայաստանը, կամ Ադրբեջանը, գրեթե միշտ սրբազան պարտքի նման հայտարարություններ են արվում ղարաբաղյան հակամարտության հարցին առավել մեծ աջակցություն ցույց տալու, հարցը առավել ակտիվ քննարկելու խոստումներով: Եվ, բնականաբար, արդեն 20-ամյա բանակցային գործընթացից առանձնակի չտարբերվող վիճակներում էլ հայտնվում են խոստումներ տվողները, որոնց հերթափոխը ոչ մի նոր ու, կարեւորը, առաջընթացային բան չի բերում հակամարտության կարգավորմանը: Այսինքն՝ առավել հաճախ այս հիմնախնդրի մասին խոսքերը կրում են զուտ հռետորական, ոչ մի բան չպարտավորեցնող ու ոչ մի հետեւանքի չբերող բնույթ:

Արցախում հուլիսի 19-ին կայացած նախագահական ընտրությունների առնչությամբ էլ դրանք «չճանաչողների» հայտարարությունները ոչ մի բան չեն փոխում այն բոլոր գործընթացներում, որ ընթանում են հենց Արցախում կամ հակամարտություն ասվածի շուրջը: Ի վերջո, ով է ընդունում կամ ով չի ընդունում անցկացված ընտրությունները՝ այնքան էլ կարեւոր չէ, եթե այդ ընտրությունները ընդունելի ու գործառնական են հենց արցախցիների համար:

Սակայն չճանաչողների շարքում Ադրբեջանի արդեն դասական դարձող կեղծարար մոտեցմամբ երբեմն հայտնվում են նաեւ կառույցներ ու երկրներ, որոնք որեւէ կերպ ու ոչ այս ընտրությունների առնչությամբ նման կարծիք չեն հայտնել: Ստացվում է, որ Ադրբեջանն օգտվում է ստեղծված վիճակից, ու ադրբեջանական իշխանությունների հետ հարաբերությունների «նավթացման» համատեքստում ԼՂՀ նախագահի ընտրությունները չճանաչողներին «միանում են» անգամ չեզոքները:

Ադրբեջանական մամուլը ԼՂՀ նախագահական ընտրությունների քվեարկությանը հաջորդած օրերին ամենայն ջանասիրությամբ «տեղեկացնում է», թե ինչպես տարբեր երկրների ու կառույցների մեծ ու փոքր չինովնիկներ հաճոյանում են Կասպյան ավազանի նավթատիրոջը:

Տես էջ 2

# Հայկական ձեռնարկությունները կօգնեն սիրիահայերին աշխատանք գտնելու

«Հայկական ծրագրեր», «Օրանժ Արմենիա», «ՎիվաՍել-ՄՏՍ», «Արմսվիսբանկ», «Ամերիաբանկ», «Կոնվերսբանկ», «Պրոմեթեյբանկ», «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ, «Հայնախագիծ», «Արֆարմացիա», «Ալֆա-Ֆարմ», «Ադամիում», «Էլբաս», «ԷդԱրթիաուքընսալթինգ», «Գունապակի» ձեռնարկությունները պատրաստակամություն են հայտնել աջակցություն ցուցաբերելու սիրիահայ մասնագետներին՝ առաջնային դիտարկելով նրանց աշխատանքի ընդունման հայտերը եւ հնարավորության սահմաններում օգնելով մասնագիտական վերապատրաստման հարցերում: Այդ մասին երեկ հայտարարություն է տարածել այս նախաձեռնության աշխատանքային գրասենյակը:

«Սիրիայի իրադարձություններն արդեն տեւական ժամանակ սրել են սիրիահայ համայնքի անվտանգության խնդիրը: Ներկայումս Սիրիայի մեր հայրենակիցներից շատերը ելքը տեսնում են Հայաստան տեղափոխվելու եւ հայրենիքում ապրելու ու աշխատելու մեջ: Արդեն իսկ ժամանել են 2-3 հազար երիտասարդներ, որոնցից շատերը լավագույն մասնագետներ են: Նրանց մի մասն արդեն աշխատում է Հայաստանի ձեռնարկություններում», ասված է հայտարարության մեջ: Աշխատանքային գրասենյակը գրանցում է Հայաստան տեղափոխված սիրիահայերին, նրանց տվյալները փոխանցում ձեռնարկություններին եւ գրանցում է այն ձեռնարկություններին, որոնք մասնագետների կարիք ունեն կամ կարող են վերապատրաստել ժամանածներին եւ օգնել նրանց աշխատանք գտնելու: Աշխատանքային գրասենյակի հեռախոսահամարն է՝ +374 (10) 574812, էլ. փոստի հասցեն: toarmenia@gmail.com

Ա. Մ.

# Տնտեսական աճի ի՞նչ ցուցանիշ կունենանք տարեվերջին

### *Ի՞նչ են հուշում հունվար-հունիսի սոցիալ-տնտեսական զարգացումները*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել էր 2012-ի հունվար-հունիս ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշները, համաձայն որոնց, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) այս տարվա առաջին կիսամյակում կազմել է 7,8 տոկոս: Հիշեցնենք, որ 2011-ից Ազգային վիճակագրական ծառայությունն անցել է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի՝ դադարեցվել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվել է տնտեսական ակտիվության ցուցանիշը: Սովորաբար ՏԱՑ-ի ցուցանիշը փոքր-ինչ բարձր է լինում, քան ՀՆԱ-ի ցուցանիշը: Այդուհանդերձ, ՏԱՑ-ի ցուցանիշը որոշակիորեն կողմնորոշում է, թե ինչ սահմաններում կգտնվի ՀՆԱ-ի ցուցանիշը:

Այժմ, նկատի ունենալով կիսամյակի 7,8 տոկոս տնտեսական ակտիվության աճը, որքանո՞վ է իրատեսական տարեկան 7 տոկոս համախառն ներքին արդյունքի աճ ակնկալելը, ինչպիսի հանձնառություն կառավարության առջեւ դրեց երկրի նախագահը: Հարցի պատասխանը ստանալու համար նախ դիտարկենք ըստ ճյուղերի տնտեսական ցուցանիշները:

Ամենամեծ աճն այս տարվա առաջին կեսին արձանագրվել է արդյունաբերությունում՝ 13 տոկոս, ապա գալիս է ծառայությունների ոլորտը՝ 12 տոկոս աճ, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 9,1 տոկոս աճ, գյուղատնտեսությունը՝ 8,1 տոկոս աճ: Վերոնշյալ ճյուղերը, բացի ծառայություններից, ներկայացնում են տնտեսության իրական հատվածը: Միանշանակ, դրական է, որ հենց իրական հատվածի շնորհիվ է տնտեսությունն աճ ապահովում: Հիշեցնենք, որ 29 ներդրումային ծրագրեր ստացել են ավելացված արժեքի հարկ հետաձգման հնարավորություն եւս 5-ի համար երկարացվել է ժամանակավոր ներմուծման համար սահմանված ռեժիմը: Այս ծրագրերի արդյունքում ավելի քան 100 մլրդ դրամի ներդրում կկատարվի Հայաստանի տնտեսության՝ կոնկրետ արդյունաբերության մեջ: Դրանց մի մասն արդեն կատարվում է, ինչի շնորհիվ է նաեւ արդյունաբերության ոլորտում արձանագրվող աճը: Նշենք, որ երկրորդ տարին է, ինչ արդյունաբերությունը պահպանում է առաջանցիկ աճի տեմպը: Այսինքն, այս միտումը, ինչպես նաեւ իրագործման փուլում գտնվող ծրագրերը հույս են ներշնչում, որ արդյունաբերության աճի տեմպը մոտ կլինի ներկայիս ցուցանիշին նաեւ տարեվերջին:

Տես էջ 3

# Ասոցացման համաձայնագրի 29 բանակցային գլխից փակվել է 28-ը



«Ասոցացման համաձայնագրի բանակցությունների մեկնարկից երկու տարի անց Հայաստանը նշանակալից առաջընթաց է արձանագրել. 29 բանակցային գլխից 28-ը արդեն փակվել է եւ ընդամենը մեկ ոլորտին վերաբերող գլուխ է մնացել համաձայնեցնելու», հուլիսի 23-ին Բրյուսելում մասնակցելով Եվրոպական միության եւ Արեւելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպմանը՝ իր ելույթում նշել է Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

Նրա խոսքերով, Հայաստանը սահուն առաջընթաց է ակնկալում խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման բանակցություններում: «Արեւելյան գործընկերության նախարարական հանդիպումները լավ հնարավորություն են ընձեռում մտքեր փոխանակելու համագործակցության խթանմանն առնչվող տարբեր հարցերի շուրջը, ամփոփելու արդեն կատարվածը եւ ներկայացնելու սպասելիքները, ինչպես նաեւ մշակելու նոր ձեռնարկվելիք քայլեր», իր խոսքում անդրադառնալով հանդիպման ձեւաչափին՝ նշել է Նալբանդյանը:

Նրա ներկայացմամբ, մարդկանց միջեւ շփումները եւ շարժունակության խթանումը համագործակցության մեկ այլ կարեւոր բաղադրիչ են: Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի խոսքով, մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման եւ ռեադմիսիայի մասին համաձայնագրերը այժմ վերջնական տեսքի են բերված, եւ առաջիկայում ակնկալում ենք դրանց ստորագրումը եւ վավերացումը:

Նիստից առաջ տեղի է ունեցել Էդվարդ Նալբանդյանի ու հարեւանության եւ ընդլայնման հարցերով եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հանդիպումը, քննարկվել են Հայաստանում բարեփոխումների աջակցության դոնորների համաժողովի հրավիրման կազմակերպչական հարցերը, առաջիկայում նախատեսվող բարձրաստիճան այցերի ժամանակացույցը:

Նույն օրը երեկոյան Հայաստանի արտգործնախարարը հանդիպել է Բելգիայի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դիդյե Ռեյնդերսի հետ: Հայաստանի եւ Բելգիայի արտգործնախարարները մանրամասն քննարկել են երկկողմ հարաբերությունների հարցերի լայն շրջանակ, անդրադարձել երկու երկրների քաղաքական երկխոսության ակտիվացման, իրավապայմանագրային դաշտի ընդլայնման, արտաքին գործերի նախարարությունների կանոնավոր խորհրդակցությունների անցկացման, տնտեսական համագործակցության խթանման, միջխորհրդարանական կապերի ակտիվացման նպատակով համապատասխան քայլերի ձեռնարկմանը:

Բելգիայի արտաքին գործերի նախարարի խնդրանքով Նալբանդյանը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող ջանքերը:

Նալբանդյանն իր բելգիացի գործընկեր Դիդյե Ռեյնդերսին հրավիրել է այցելել Հայաստան:

**Ա. Հ.**

# Մերժվեց թուրքամետ բանաձեւի հաստատումը

Ամերիկայի հայկական համագումարից տեղեկացանք, որ Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատը մերժել է թուրքական ընկերություններին մենաշնորհ տալու մասին օրինագիծը:

Բնիկ հնդկացի ցեղերի հետ առեւտրի ու ներդրումների մասին բանաձեւի հաստատումը մերժել են Ներկայացուցիչների պալատի զույգ կուսակցությունները:

Բանաձեւը նախատեսում էր թուրքական ընկերություններին շնորհել մենաշնորհային դիրք ներդրումներ կատարելու Ամերիկայի հնդկացի ցեղերին պատկանող հողերում: Սակայն անհրաժեշտ ձայների քանակությունը չապահովելու պատճառով օրինագիծը չի ընդունվել:

Օրինագծի վերաբերյալ նաեւ իր բացասական կարծիքն է հայտնել Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի նախագահ Ֆրենկ Փալոնը եւ հորդորել իր գործընկերներին՝ դեմ քվեարկել բանաձեւին:

**Ի. Պ.**

# Չմարսվող արցախյան ընտրություններ

*1-ին էջից*

Այդ շարքում հուլիսի 20-ին հայտնվել էր նաեւ Շվեյցարիան, ըստ որում, այդ մասին տեղեկացնող «Թրենդ» գործակալությունը հղում էր արել ոչ թե հենց այդ երկրի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտին, այլ Շվեյցարիայում Ադրբեջանի դեսպանությանը: Ըստ այդմ, իբր նշված դեպարտամենտը «վերաբերմունք էր հայտնել» Արցախում կայացած ընտրությունների առնչությամբ, նշելով, թե «Շվեյցարիան Լեռնային Ղարաբաղը ճանաչում է Ադրբեջանի մաս եւ հարգանքով է վերաբերվում Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը»:

Սակայն իրականում Շվեյցարիայի համապատասխան գերատեսչությունը հուլիսի 19-ի ընտրությունների առնչությամբ որեւէ հայտարարությամբ հանդես չի եկել: Ավելին, ըստ մեր տեղեկությունների, Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարություն պաշտոնական նոտա է հղել հենց այդ երկրում Ադրբեջանի դեսպանությունը՝ Արցախում նախագահական ընտրությունների առնչությամբ վերաբերմունք արտահայտելու խնդրանքով: Շվեյցարական արտաքին գերատեսչությունից արձագանքել են, որ մինչ այդ եւ այս ընտրությունների դեպքում էլ Շվեյցարիան պաշտոնական հայտարարություններ չի արել ու չի անում:

Հասկանալի է, որ թերեւս ոչ սեփական նախաձեռնությամբ, բայց «չճանաչելու» մասին հայտարարություններ տարածվել են նաեւ այլ երկրների պարագայում, սակայն հետաքրքրական է, որ ընտրությունների հարցին, ըստ ադրբեջանական մամուլի, անդրադարձել է նաեւ Իրանի արտաքին հարցերով զբաղվող գերատեսչությունը, ըստ որում, ադրբեջանական մամուլը հղում է անում իրանական IRINN հեռուստաալիքին: Այդ տեղեկության համաձայն, երեկ Իրանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Ռամին Մեհմանփարաստը հայտարարել է, թե հուլիսի 19-ի ընտրությունները «բացասաբար են անդրադառնում հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացի վրա»:

Իրանի ԱԳՆ ներկայացուցիչը իբր նաեւ հայտարարել է, թե «քանի դեռ հակամարտության կողմերը համաձայնության չեն եկել կարգավորման շուրջը, նման գործողությունները բացասաբար են ազդում բանակցային գործընթացի վրա»:

Իրանի պարագայում այսօրինակ հայտարարությունը որքան անհասկանալի, նույնքան էլ ոչ վստահելի է թվում: Իրականում «Մեհր» իրանական գործակալության փոխանցմամբ Ռամին Մեհմանփարաստը ասել է, որ «քանի դեռ Ադրբեջանի եւ Հայաստանի բանակցությունները արդյունքի չեն հասել, չեմ կարծում այս քայլերը ընդունելի արդյունք ունենան»: Փաստացի Իրանի ազն ներկայացուցիչը չեզոք դիրքորոշումը պահպանել է՝ շեշտելով, որ պետք է աշխատել բանակցություններում արդյունքի հասնելու համար:

## ԿՐԹԱԿԱՆ

# Հայկական կողմը շահագրգիռ է իրանցի ուսանողների ավելացմամբ

**Կրթության ու գիտության նախարար Արմեն Աշոտյանը երեկ ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ դեսպան Մուհամմադ Ռեիսին:**

**Արմեն Աշոտյանը դեսպանին ասել է, որ Իրան կատարած իր այցի ընթացքում տպավորվել է պետության՝ կրթության ու գիտության բնագավառին հատկացրած ներդրումների ծավալից, նախարարը հույս է հայտնել, որ 2 երկրների միջեւ ստորագրված միջկառավարական համաձայնագրով նախանշված կրթական ծրագրերը զարգացում կապրեն, մասնավորապես՝ Թեհրանի համալսարանում հայագիտական, իսկ ԵՊՀ-ում՝ իսլամագիտական կենտրոնների բացումը:**

**Արմեն Աշոտյանի խոսքով՝ հայկական կողմը շահագրգիռ է հայկական բուհերում իրանցի ուսանողների թվի ավելացմամբ:**

**Հանդիպման ընթացքում նրանք նաեւ քննարկել են գիտխորհուրդների, բուհական եւ հետբուհական կրթությանն առնչվող հարցերը:**

**Ի. Պ.**

# Հաշմանդամ երեխաների հանգիստը կազմակերպվում է Սեւանում

**Երեւանում ու մարզերում բնակվող սահմանափակ կարողություններով շուրջ 100 երեխա ամառային հանգիստը կանցկացնեն «Կապույտ Սեւան» հանգստյան տանը: Հուլիսի սկզբից մեկնարկած ամենամյա ծրագիրն իրականացնում է «Փյունիկ» ՀԿ-ն՝ ՀՀ նախագահի հիմնադրամի հովանավորությամբ:**

**«Փյունիկ» միության ծրագրերի ղեկավար Ռուզաննա Սարգսյանը «Արմենպրեսի» հետ զրույցում նշել է, որ հանգստի ընթացքում երեխաների հետ մարզումներ կանցկացնի առագաստանավային սպորտի թիմը:**

**Բացի հիմնադրամի տրամադրած 9 մլն դրամից՝ ծրագրին աջակցում են նաեւ մասնավոր հատվածը, հասարակական կազմակերպությունները եւ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունը: Սակայն նախարարությունում տեղեկացնում են, որ հաշմանդամների հանգստի կազմակերպման համար պետական բյուջեից գումար չի նախատեսվում:**

**Ի. Պ.**

# Ընդդեմ սերիալային բռնության



**«Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպությունը, հետամուտ լինելով կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման եւ գենդերային հավասարության ջատագովման իր առաքելությանը, իր խորին դժգոհությունն է արտահայտում հայկական հեռուստատեսություններով հեռարձակվող հեռուստասերիալների սյուժեի եւ բովանդակության նկատմամբ:**

**Այսօրվա հեռուստասերիալներում կանանց հանդեպ բռնության տարատեսակ դրսեւորումները, սեքսիստական արտահայտությունները, կանանց շարունակական լացն ու ընկճվածությունը, ինչպես նաեւ այն կերպարները, որոնցով կանայք ներկայանում են, մտահոգվելու լուրջ տեղիք են տալիս:**

**Հաշվի առնելով այն փաստը, որ «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Դժվար ապրուստ» հեռուստասերիալը Հայաստանի 4 եւ ավելի բարձր հեռուստահաղորդումների ցուցակում զբաղեցնում է առաջին հորիզոնականը եւ ամենառեյտինգայինն է, մեր կազմակերպությունը որոշել է գենդերային տեսանկյունից անդրադարձ կատարել հենց այդ սերիալի բովանդակությանը:**

**Այս առիթով հուլիսի 27-ին ժամը 19:30-ին Շառլ Ազնավուրի հրապարակում՝ «Մոսկվա» կինոթատրոնի դիմաց, կազմակերպվում է խոշոր հանրային միջոցառում: Միջոցառման ընթացքում հրապարակվելու են «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից իրականացված «Դժվար ապրուստ» հեռուստասերիալի ուսումնասիրության ամփոփ արդյունքները, ցուցադրվելու է սոցիալական հոլովակ հեռուստասերիալի մասին, անցկացվելու է ֆլեշմոբ, բաժանվելու են տեղեկատվական բուկլետներ, իրականացվելու է ստորագրահավաք:**

**Հորդորում ենք զանգվածային լրատվական միջոցներին՝ ներկա գտնվելու այս հույժ կարեւոր իրադարձությանը, ինչպես նաեւ հանրությանը տարածելու միջոցառման մասին տեղեկատվությունը: Միեւնույն ժամանակ խրախուսում ենք ՀՀ ոչ անտարբեր քաղաքացիների մասնակցությունը՝ միասին բողոքի ձայն բարձրացնելու հեռուստասերիալներում ցուցադրվող բռնությունների վերաբերյալ:**

**Հարգանքներով՝**

**Հասարակություն առանց բռնության ՀԿ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

ԱԶԳ

Անցուդարձ

# Արդարադատության նախարար. Ծրագրին դեմ լինել՝ նշանակում է դեմ լինել Հայաստանի զարգացմանը




Արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանը** համոզված է՝ դատաիրավական բարեփոխումների 2012-16 թթ. ռազմավարական ծրագիրը լավ Հայաստան ունենալուն միտված քայլերի ամբողջություն է: Ծրագրի իրականացման ավարտից հետո կլինի մի համակարգ, որն ավելի զերծ է կոռուպցիոն ռիսկերից եւ բյուրոկրատական քաշքշուկներից: Ավելի վաղ այս համակարգը նախարարը նմանեցրել էր նոր դասի մարդատար մեքենայի, որը անվտանգ է, ապահով, քիչ բենզին է ծախսում, սակայն առավել արդյունավետ եւ արագ է:

Երեկ ծրագիրը ներկայացնելիս Թովմասյանը տեսակետ հայտնեց, որ եթե ինչ-որ մեկը դեմ լինի այս ծրագրին, ապա նշանակում է, որ դեմ է Հայաստանի զարգացմանը, առկա մարտահրավերները հաղթահարելուն, ավելի հզոր ու կայացած հայրենիք ունենալուն: «Դա նշանակում է դեմ լինել հանրային կյանքն առավել արդար սկզբունքի վրա կառուցելուն»:

Խոսելով առանձնահատկություններից՝ Թովմասյանը շեշտում է ծրագրի ընդգրկունությունը: Ի տարբերություն այլ ծրագրերի, սա չի սահմանափակվում միայն դատական համակարգով: «Ծրագրում ներառված են բարեփոխումների ուղղություններ, որոնք վերաբերում են դատական իշխանությանը՝ ներառյալ դատախազությունը, նաեւ փաստաբանությանը, նոտարիատին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությանը, քրեակատարողական համակարգին: Առաջին անգամ ծրագրում տեղ են գտել իրավաբանական կրթությանը վերաբերող դրույթներ»: Նախարարը համոզված է, որ ծրագիրը միայն բարի ցանկությունների շարադրանք չէ: Այստեղ ամրագրված են նպատակներ, եւ դրանց հասնելու խնդիրը դրված է յուրաքանչյուրիս վրա:

Թովմասյանը հիշեցնում է նաեւ, որ ծրագիրը մշակվել է արդարադատության նախարարությունում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ եւ գտնվել նախագահի անմիջական ուշադրության եւ հսկողության ներքո: Այնուհետեւ ծրագիրը լսել են նաեւ խորհրդարանում, որից հետո նախագահն այն հաստատել է: Հետեւաբար, ըստ Թովմասյանի, թեպետ իրականացնողը հասարակությունն է, սակայն պատասխանատուն՝ իշխանություններն են:

«Ծրագրի իրականացումը իշխանությունների պատվի խնդիրն է», ասում է նախարարը՝ բարեփոխումների ճանապարհին բացառելով դանդաղկոտությունը:

Ծրագրի ավարտն էլ խոստումնալից է՝ կունենանք վստահելի եւ կայուն դատաիրավական համակարգ: Նախարարի գնահատմամբ՝ ծրագիրը քարացած փաստաթուղթ չէ եւ առաջիկա չորս տարվա ընթացքում կարող է որոշակի փոփոխությունների ենթարկվել՝ արձագանքելով ժամանակակից մարտահրավերներին:

Թովմասյանի մեկնաբանությամբ՝ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մի քանի տասնյակ միլիոն դոլար, սակայն բուն օրենսդրական ակտերը մեծ գումարներ չեն պահանջում, որը բյուջետային, գրանտային միջոցներով հնարավոր է իրականացնել: Նախարարը նաեւ հավաստիացրեց՝ անելու են հնարավորը, որպեսզի ծրագրի իրականացմանը վարկային միջոց չներգրավվի:

ՀՀ նախագահի իրավական հարցերով օգնական **Գեորգի Կոտոյանի** մեկնաբանությամբ՝ ծրագիրը տարբերվում է իր մշակման եւ ընդունման ընթացակարգով, քանի որ անդրադառնում է խնդիրների առավել լայն շրջանակի: Նրա խոսքերով՝ գաղափարախոսությամբ եւ տրամաբանությամբ ծրագիրը մեկ ամբողջություն է կազմում եւ որեւէ կետի ոչ ժամանակին իրականացումը վտանգելու է ամբողջ ծրագիրը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն եւ Երեւանի Կենտրոն վարչական շրջանը ստորագրել են փոխգործակցության հուշագիր

**ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, եւ Երեւանի Կենտրոն վարչական շրջանը հայտարարում են երկկողմ գործակցության մեկնարկի մասին: Երեկ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը եւ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Արա Սադոյանը ստորագրել են փոխգործակցության հուշագիր:**

**Հուշագիրը նախանշում է Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորի եւ Կենտրոն վարչական շրջանի միջեւ 2012 թ. ընթացքում համագործակցության շրջանակները: Կողմերը համատեղ ծրագրեր կիրականացնեն մասնավորապես՝ հանրային կրթության եւ մշակույթի ոլորտներում:**



**Համագործակցությունն ուղղված է Երեւանի կենտրոնի զարգացմանը: Կենտրոն վարչական շրջանը մայրաքաղաքի մշակութային եւ գործարար կենտրոնն է: Երեւանի մշակութային, վարչական եւ կրթական հիմնարկությունների զգալի մասը գտնվում է հենց այստեղ: Երեւանի կենտրոնը Հայաստան այցելողների եւ հայաստանցիների համար կարեւորագույն այն վայրերից է, որտեղ կազմակերպվում են գիտաժողովներ, բացօթյա համերգներ, պետական միջոցառումներ եւ ցուցահանդեսներ:**

**Այս համատեքստում՝ քաղաքի զարգացմանն ուղղված նախագծերին սատարելու պատրաստակամությունը հնարավոր չէ գերագնահատել: Որպես կորպորատիվ սոցիալապես պատասխանատու ընկերություն, ՎիվաՍել-ՄՏՍ-ն չի կարող անմասն մնալ այս ծրագրերից եւ աջակցության ձեռք է մեկնում Կենտրոն վարչական շրջանին:**

**«Մայրաքաղաքի կենտրոնը գնահատվում է որպես ազգային արժեք՝ յուրաքանչյուր հայի կողմից: Մենք պետք է հնարավորինս փայփայենք ու հոգ տանենք դրա մասին: Մայրաքաղաքի կենտրոնն այն վայրն է, որից ստացած տպավորությունների հիման վրա, հյուրերը կարծիք են կազմում ամբողջ երկրի մասին. ծանոթանում են մայրաքաղաքի ճարտարապետական համալիրներին, ինչպես նաեւ կարծիք կազմում՝ երկրի զարգացման մակարդակի մասին: Մայրաքաղաքի կենտրոնն այն վայրն է, որտեղ կարելի է ծանոթանալ քաղաքի եւ երկրի պատմությանն եւ հասարակության զարգացմանը»,-նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրենը:**

**«ՎիվաՍել-ՄՏՍ-ի հոգածությունը մայրաքաղաքի, հատկապես Կենտրոն վարչական շրջանի հանդեպ իսկապես գնահատելի է: Վստահ եմ, որ ամենամոտ ապագայում տեսանելի կլինեն մեր փոխգործակցության արդյունքները: Համատեղ իրագործած բազմաթիվ ծրագրերն ու միջոցառումները կնպաստեն այցելուներին մայրաքաղաքի մասին ավելի լիարժեք եւ տպավորիչ տեղեկատվություն փոխանցելուն: Պատահական չէ ասված՝ Կենտրոնը Երեւանի սիրտն է», - ասել է Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Արա Սադոյանը:**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԱՆԻՔ

# ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացնում է

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դեռևս շարունակվում է սոցիալական քարտ ստանալու վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված քաղաքացիների դիմումների հոսքը, մեկ անգամ ևս պարզաբանում ենք.

2012 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, որով ուժը կորցրած է ճանաչվել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը:

Համաձայն «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի՝ սկսած 2012 թվականի հունիսի 1-ից, սոցիալական ապահովության քարտի փոխարեն, քաղաքացիներին հատկացվում է հանրային ծառայությունների համարանիշ, իսկ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի փոխարեն՝ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանք:

Ըստ այդմ, սկսած 2012 թվականի հունիսի 1-ից, դադարեցվում է քաղաքացիներին սոցիալական ապահովության քարտերի և սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքների հատկացումը «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի կողմից (այդ թվում՝ սոցիալական ապահովության տարածքային բաժինների, սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների և զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով):

Միաժամանակ, «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նախկինում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրված սոցիալական ապահովության քարտերը կարող են օգտագործվել օրենքով նախատեսված նպատակներով՝ որպես հանրային ծառայությունների համարանիշ:

Հանրային ծառայությունների համարանիշը հատկացնում է բնակչության պետական ռեգիստրը վարող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 419-Ն որոշման համաձայն, սկսած 2012 թվականի հունիսի 1-ից, հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանք ստանալու համար, անձը դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ իր բնակության վայրի տարածքային անձնագրային ծառայություն:

# Տնտեսական աճի ի՞նչ ցուցանիշ կունենանք տարեվերջին

*1-ին էջից*

**Գյուղատնտեսության ոլորտում աճը պայմանավորված է ոչ միայն այս տարվա բարենպաստ կլիմայական պայմաններով, այլ նաեւ մի շարք կարեւոր հարցերում գյուղացիներին ցուցաբերվող պետական աջակցությամբ: Դրանցից ամենաէականը դիզվառելիքի եւ պարարտանյութի տրամադրումն է գյուղացիներին՝ պետության աջակցության շնորհիվ շուկայականից ցածր գներով, եւ գյուղատնտեսական վարկերը, որոնց տոկոսների մի մասի սուբսիդավորումը նույնպես կառավարությունը ֆինանսավորում է պետական բյուջեից: Գյուղատնտեսության արտադրության ծավալները, բնականաբար, սեզոնային գործոնով են պայմանավորված: Այսինքն, այն ընդհանուր տնտեսական աճի վրա ազդելու է հիմնականում ամռանը եւ աշնան առաջին երկու ամիսներին:**

**Ծառայությունների ոլորտում աճի տեմպի պահպանումն առավել հավանական է, քան գյուղատնտեսության ոլորտում: Հատկապես ամռան ամիսներին զբոսաշրջային ոլորտի հետ կապված ծառայությունները աճ կունենան: Ծառայությունների մեկ այլ՝ հեռահաղորդակցության ոլորտը, ամենադինամիկ եւ մրցակցային ոլորտը լինելով, կշարունակի զարգանալ առաջիկա ամիսներին եւս:**

**Մյուս ոլորտներից մանրածախ առեւտուրը, որն առաջին կիսամյակում աճել է 2,4 տոկոսով, ինչպես միշտ, կտրուկ աճ կունենա տարեվերջին՝ կապված նախատոնական շրջանի հետ:**

**Ինչ վերաբերում է շինարարությանը, ապա այստեղ հունվար-հունիսին արձանագրվել է 6,7 տոկոս անկում: Շինարարության հետ կապված աճի հույսեր տածել չարժե: Նրա առավել ակտիվ սեզոնը հիմա է՝ ամռանը: Լավագույն դեպքում անկման տեմպը կարող է այստեղ փոքր-ինչ նվազել, սակայն դա էլ քիչ հավանական է թվում: Ի դեպ, չէր խանգարի, որ կառավարությունը այս ոլորտում նույնպես որոշակի աջակցության ծրագրեր իրականացներ՝ հիմնական ուշադրությունը արդյունաբերությունից չշեղելով: Չմոռանանք, որ տնտեսական երկնիշ աճի տարիներին այս ոլորտն ապահովում էր զգալի թվով աշխատատեղեր եւ նպաստում շինանյութերի արտադրության աճին:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը 2012-ի հունվար-հունիսին 2011-ի հունվար-հունիսի նկատմամբ ավելացել է 8,3 տոկոսով եւ կազմել մոտ 2 մլրդ 702 մլն դոլար: Արտահանումը կազմել է 684,4 մլն դոլար՝ արձանագրելով 13,5 տոկոս աճ, ներմուծումը կազմել է 2 մլրդ 17 մլն դոլար՝ աճելով 6,7 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը այս տարվա հունվար-հունիսին կազմել է մոտ 1,3 մլրդ դոլար, գրեթե այնքան, ինչքան անցյալ տարվա հունվար-հունիսին: Սակայն, այստեղ հարկ է նկատի ունենալ, որ արտահանումն ավելի արագ տեմպերով է աճում, քան ներմուծումը, եւ որ դա տեղի է ունենում միջազգային շուկայում մետաղների գների որոշակի նվազման պայմաններում: Ինչը վկայում է, որ արտահանման կառուցվածքը որոշակիորեն փոխվում է:**

**Վերադառնալով այն հարցին, թե տնտեսական, այսինքն՝ ՀՆԱ աճի ի՞նչ ցուցանիշ կունենանք տարեվերջին, ապա, նկատի ունենալով տնտեսության առաջին կիսամյակի միտումները եւ հնարավոր զարգացումները, կարելի է ենթադրել, որ եթե 7 տոկոսի չհասնի էլ, համենայն դեպս, կգտնվի 6-7 տոկոսի միջակայքում: Միջազգային տնտեսության ներկայիս ավելի ցածր աճի տեմպերը հաշվի առնելով՝ դա նույնպես լավ արդյունք կլինի:**

ԱԶԳ

# Գաղափարաբանություն

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## Ազգային զգացում եւ գիտակցություն

*«Հզորության գաղտնիքը հասկացել են մարդկային ա՛յն խմբակցությունները, որոնք ճակատագրի դեմ ոգորելիս զգում են, որ պետք չէ հակասության մեջ դնել բանականը եւ բնազդականը, որոնք գիտեն, թե նվաճունակ մտքի բուն աղբյուրը առողջ բնազդն է»:*

*Հայկ Ասատրյան*

Զգայականի եւ գիտակցականի կապը՝ թե՛ անհատների, թե՛ հավաքականությունների տարածքում, հաստատված է գիտությամբ, եւ նմանատիպ կապերով են հաճախ որոշվում անհատ-հավաքականություն հարաբերությունները:

Ինչպես ուսուցանում է հայ դասական ազգայնականությունը՝ ազգային զգացումը արդյունք է ազգային հավաքական էության եւ առանձին անհատի մեջ հանդես է գալիս իբրեւ այդ հավաքական էությունից փոխանցված մասնիկ: Այս դեպքում անհատը բնազդաբար զգում է, որ ինքը կապված է մի հավաքականության եւ զգացումի (բնազդի), թելադրանքով ապրում է այդ հավաքականության կյանքով (կենցաղով, բարոյականով եւ այլն):

Իսկ ազգի հավաքական գիտակցությունը ձեւավորվում է նրա առանձին անհատների գիտակցությունների միավորումով եւ ամբողջացումով: Անհատի ազգային գիտակցությունը հենվում է նրա ազգային զգացումի վրա. դա է ամենաասերտ կապը ազգի առանձին անհատների գիտակցությունների միջեւ: Այս դեպքում անհատը սկզբում գիտակցում է այն կապերը, որ կապում են իրեն ազգային հավաքականությանը, այն առանձնահատկությունները, որոնցով ինքը տարբերվում է մյուս ազգերից, գիտակցում է սեփական արժեքը ազգերի համալիրում, ապա գիտակցաբար կամենում է պահպանել ու զարգացնել դրանք՝ այդպիսով հավերժացնելով իր ազգային անկրկնելիությունը, ամրապնդելով ազգի հավաքական միությունը:

Այս առումով՝ մենք մշտապես պետք է կարողանանք զուգորդել աշխարհայեցողության զգայական եւ գիտակցական կողմերը, եւ մեր զգացումներն ու բանականությունը միշտ պետք է գործեն ներդաշնակ:

**ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ**
**ՀՀԿ նախագահի տեղակալ**

## Նոր դիկտատոր մըն ալ

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ

***Մեր մեծագույն գրողներից՝ համաշխարհային գրականության մեծերի շարքին դասվելու արժանի երգիծաբան Երվանդ Օտյանը, որպես ազատականության եւ ժողովրդավարության գաղափարների նվիրյալ, առիթը բաց չի թողել քննադատելու բռնակալներին, որոնք Եվրոպայի բազմաթիվ երկրներում իշխել են սկսած 1-ին համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդող տարիներից, ի վերջո պարարտ հող նախապատրաստելով 2-րդ համաշխարհայինի համար: Ստորեւ ներկայացվող պամֆլետը երգիծաբանի «Վերնատունէն» խորագրված շարքից է, որը լույս է տեսել 1925-1926 թթ.-ին, Եգիպտոսի ՌԱԿ պաշտոնաթերթ «Արեւ»ի էջերում:***

Խօսքս մարաջախտ Փիլսուտսքիի[1] մասին է, որ արդէն տէր դարձաւ Բոլոնիոյ ճակատագրին, գոնէ առայժմ:

Ըսելիք չի կայ. բախտը ժամանակէ մը ի վեր դիկտատորներուն կը ժպտի: Մուսոլինին[2] կար արդէն, որուն հետեւեցաւ Ռիվէռա[3], յետոյ մէջտեղ ելաւ զօրավար Փանկալօս[4], ու իբրեւ ամենայետին ժամու դիկտատոր՝ մարաջախտ Փիլսուտսքին: Չմոռնանք նաեւ մեծագոյնը՝ Մուսթաֆա Քեմալ, որ այնքա՜ն շքեղօրէն կը վարէ Թուրքիան:

Ինչ որ զարմանալի է, այն է, թէ բոլոր այդ երկիրները, Իտալիա, Սպանիա, Յունաստան, Բոլոնիա եւ նոյնիսկ Թուրքիա կը վայելեն ազատական ռամկավարական սահմանադրութիւններ, ամէն քաղաքացի ընտրող եւ ընտրելի է, մեծամասնութեան կամքն է տիրողը, եւ կամայականութիւնը որեւէ դեր չի կրնար ունենալ:

Բայց դիկտատորը հրաշագործ է. հո՛ն է իրեն արժանիքը: Սահմանադրութիւնը չի ջնջեր, քաղաքացիներուն ազատութիւնը չի կապտեր, միայն ինքզինքն ու իրենները կը պարտադրէ տեսակ մը մոգական ազդեցութեամբ:

Առնենք Իտալիան, որ ասկէ առաջ զանազան կուսակցութիւններու բաժնուած էր, որոնք զիրար կը չէզոքացնէին կամ ամլութեան կը դատապարտէին խորհրդարանին մէջ, Մուսոլինին եկաւ, նոր ընտրութիւններ կատարեց, եւ հրաշքով բոլոր այդ ազատ քաղաքացիները իրենց ազատ կամքով ու ազատ քուէով գրեթէ միմիայն ֆաշիսթ երեսփոխաններ ընտրեցին:

Նոյնը տեղի ունեցաւ վերջերս ռամկավար Յունաստանի մէջ, ուր ջախջախիչ մեծամասնութիւն շահեցաւ զօրավար Փանկալօս իր մարդոցմով:

Վաղը ապահովաբար նոյնը պիտի կատարուի նաեւ Բոլոնիոյ մէջ, եւ ամէն ազատ քաղաքացի մարաջախտ Փիլսուտսքիի կուսակից պիտի արթննայ յանկարծ:

Ընդհանուր քուէարկութեամբ եւ ազատ սկզբունքներով թրծուած քաղաքացիները այս առաւելութիւնը ունին: Իրենց համոզումները երբեք կաշկանդուած չեն, ու մէկ օրէն միւսը պահպանողական, ազատական, արմատական, ընկերվարական կամ քոմիւնիսթ կրնան փոխուիլ, եւ ամէնքը միասին ըլլալ ֆաշիսթ կամ փանկալօսիսթ ու փիլսուտսքիսթ:

Հոս է ահա՛ քուէարկութեան եւ սահմանադրական վարչաձեւին գեղեցկութիւնը:

**Ուրբաթ, 28 մայիս 1926**

*1- Փիլսուտսքի (Պիլսուդսկի Յուզեֆ. 1867-1935)- լեհ քաղաքական գործիչ: 1918 թ. հռչակվել է Լեհաստանի դիկտատոր (մինչեւ 1922-ը): 1926 թ. կատարել է ռազմական հեղաշրջում՝ երկրում ստեղծելով հետադիմական վարչակարգ:*

*2- Բենիտո Մուսոլինին (1883-1945) Իտալիայի ֆաշիստական կառավարության ղեկավարն է եղել 1922-1943 թթ.:*

*3- Խոսքը իսպանացի գեներալ Մ. Պրիմո դե Ռիվերայի մասին է, որը 1923 թ. երկրում կատարել է պետական հեղաշրջում՝ հաստատելով ֆաշիստական տիպի ռազմամիապետական դիկտատուրա:*

*4- Փանկալօս (Պանգալոս)- հույն գեներալ, որ 1925 թ. ամռանը զավթել է Հունաստանի վարչապետի պաշտոնը՝ երկրում հաստատելով ֆաշիստական բռնատիրություն: 1926 թ. ապրիլի 18-ին իրեն հռչակել է երկրի նախագահ, ղեկավարելով մինչեւ 1926 թ. օգոստոսի 22-ի հեղաշրջումը:*

## Տեր կանգնենք մեր դարավոր «բրենդներից» մեկին

Օրերս կուսակցության գրասենյակ էին այցելել մի խումբ մարդիկ, որոնք ներկայանալով որպես «հին երեւանցիներ», ողջունում էին ՀՌԱԿ-ի ու Արմենական-ՌԱԿ-ի միավորման գործընթացը եւ ցանկություն էին հայտնում, որ համախմբումը շարունակվի նաեւ Սփյուռքում, եւ եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, մոտ ապագայում իրենք էլ սիրով կմիանան ու կհամալրեն ՌԱԿ-ի շարքերը: Որովհետեւ, նրանց կարծիքով, շուրջ դարուկես է, ինչ հայ ժողովուրդը որքան էլ երկնեց, այդպես էլ չորրորդ կուսակցությունը չկարողացավ լույս աշխարհ բերել: Իհարկե, սոցիալիստական, կոմունիստական ու չգիտեմ էլի ինչական կուսակցություններ եղան մեր կյանքում, բայց նրանք մերը չէին, օտարածին էին, ժամանակավոր ու նաեւ պարտադրված, դրա համար էլ անցողիկ բնույթ ունեին: Խոսքը մեր, ավանդականների մասին է, որոնք իսկապես ազգային հարստություն են, իսկ նրանց պահպանումը՝ յուրաքանչյուր հայի հոգու պարտքը: Իսկ, նրանց կարծիքով, ՌԱԿ-ն ու նրա հանդարտաբարո կեցվածքը վայրիվերումներով հարուստ մեր ժամանակներում, օդի նման անհրաժեշտ են պատերազմական վիճակում գտնվող հայերիս համար: Վանեցիների արմատներով այդ երեւանցիները վստահեցնում էին, որ շատերը կան, ովքեր ակնդետ հետեւում են ընթացող միավորմանը եւ պատրաստ են իրենց ուժերի ներածին չափով սատար կանգնել ՌԱԿ-ին: Մեր զրույցի ընթացքում շոշափվեցին շատ խնդիրներ, որոնք էլ առիթ դարձան այս փոքրիկ հրապարակման:

Մեր իրականությունն ինչո՞վ է այսօր հարուստ: Հարց, որին հազար ու մի պատասխան կարելի է տալ: Այդ թվում նաեւ՝ կուսակցություններով ու գեղեցիկ, բարի, մարդասեր, եւ, որ ամենատարածվածն ու կարեւորն է, մոտ ապագայում Երկիր մոլորակը դրախտավայր դարձնելու լիուլի նրանց խոստումներով: Գեղեցիկ ու խոստումնալից տողեր կան նաեւ մեր ծրագրային փաստաթղթերում: Բայց: Հենց այս «բայցն» էլ կուզենայի մեկնել, հասկանալի ու մատչելի դարձնել մեր հանրությանը: «Բայց», որը ներշնչել է շատ սերունդների, մղել նրանց հայրենանպաստ բազմաթիվ ու բազմաձեւ զոհողությունների, վայելել հաղթանակի բերկրանքը, ապրել սեփական ժողովրդին օգտակար լինելու ամենացանկալի հոգեվիճակները:

Շատ լավ հասկանում ենք, որ ժողովրդի համար հարուստ ու բարեկեցիկ կյանք ապահովելու համար նախ եւ առաջ առողջ ու գիտական նվաճումների վրա հիմնված տնտեսություն է հարկավոր, որն ազատ պետք է լինի ամեն մի կապանքից, որտեղ գործում են իսկապես առողջ մրցակցությունն ու մասնավոր, շուկայական տնտեսաձեւին հարիր կանոնները: Իսկ այդպիսի տնտեսություն ունենալու համար հարկավոր է նաեւ օրինական այնպիսի դաշտ, որտեղ օրենքի գերակայությունը պարտադիր է բոլորի համար՝ անկախ որեւէ մեկի հասարակության մեջ ունեցած դիրքից ու նյութական հնարավորություններից: Սակայն դրա մասին չէ, որ այսօր ուզում ենք խոսել: Այլ այն, որ մենք այսօր առաջնահերթ ենք համարում ժողովրդի քաղաքական դաստիարակությունը՝ նրան առաջարկելով նպատակների ու գործունեության ճշմարիտ մի ուղի, որը, դրականորեն օժանդակելով հայկական պետականության վերաշինության, նրա առաջադիմության եւ հզորացման գործին, միեւնույն ժամանակ զերծ է պահում հասարակական կյանքը պահպանողական եւ արմատական ծայրահեղությունների վնասակար ազդեցություններից, ապահովում նրա զարգացման ներդաշնակ ընթացքը: Պահպանողականը, ավանդականը ընդունելի են այն չափով միայն, որքանով անհրաժեշտ են մեր ազգային ինքնությունը պահպանելու համար: Արմատականը, նորն ընդունելի է այն չափով միայն, որքանով նպաստում է հաղթահարել առաջընթացի խոչընդոտները:

Սկզբունքների այս հավասարակշիռ ընտրությունը ռամկավարական եւ ազատական է իր բնույթով եւ պայմանավորում է կուսակցության գործելակերպը: Հավասարակշռությունը խախտվելու դեպքում պահպանողականությունը վերափոխվում է հետադիմության, արմատականությունը՝ ամբոխավարության կամ անիշխանության: Երկու ծայրահեղությունների, որոնց անհաշտ պայքարը կարող է ավարտվել ժողովրդի նոր ստրկացմամբ, մեծամասնության բռնի ենթարկմամբ փոքրամասնության իշխանությանը: Նման պարագայում մեր կուսակցության գործելակերպը դառնում է խիստ վճռական, իսկ դիրքորոշումը՝ անհանդուրժող, քանզի վտանգվում են ոչ միայն ժողովրդի քաղաքակիրթ ինքնությունն ու հոգեբանությունը, այլեւ տասնյակ տարիների նրա տքնաջան աշխատանքով ձեռք բերված արժեքներն ու ինքնիշխան պետականությունը:

Այդ իսկ պատճառով, հետամնդելով իրապաշտ քաղաքական նպատակներ, մենք չենք հրաժարվի իշխանության կառույցների, քաղաքական այլ ուժերի ազատ քննադատության մեր իրավունքից, համախոհ ուժերի հետ համագործակցելու հնարավորությունից, ինչպես նաեւ ՀՀ-ի ղեկավարումը ընտրապայքարի, այսինքն՝ ազատ, համաժողովրդական ընտրությունների միջոցով ստանձնելու եւ քաղաքական նպատակները կենսագործելու հայրենասիրական պարտականությունից՝ գործելով ՀՀ սահմանադրության եւ իր իրավունքների շրջանակում:

Մեր կարծիքով, ՀՀ-ում իրագործվում են փոփոխություններ, որոնք սակայն շատ դանդաղ են ընթանում եւ հաճախ անարդյունք են: Սակայն, միեւնույն ժամանակ, ողջունում եւ արժեւորում ենք դրանք՝ ելնելով սոցիալական եւ տնտեսական ոլորտների զարգացման ներքին տրամաբանությունից եւ արդյունքներից, որոնք զգալիորեն տարբերվում են իշխանությունների հայտարարած նպատակներից: Մեր կարծիքով, ժողովրդի կյանքի փոփոխմանը միտված գործառույթներին անցած տարիներին բնորոշ է եղել բարեշրջումների իրագործելի ծրագրերի սակավությունը, որի արդյունքում՝ հասարակության վիճակն այսօր այնքան էլ ցանկալի մակարդակում չէ: Բնակչության գերակշիռ մասը հայտնվել է տնտեսապես ծայրահեղ անպաշտպան վիճակում, ինչի հետեւանքով էլ արտագաղթում է: Ընդհանուր առմամբ, հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, սոցիալական բարեփոխումների իրականացման տեսանկյունից, մեր գնահատմամբ, ելակետայինից պակաս բարենպաստ վիճակում է, իսկ արմատական բարեփոխումները հաջողությամբ կարող է իրագործել միայն ժողովրդի վստահությունը վայելող կառավարությունը: Կառավարություն, որն իրապես ընդունակ է ու օժտված տնտեսական եւ սոցիալական ոլորտների վրա ներգործելու կարողությամբ, կառավարողների իրազեկությամբ, մակարդակով եւ այլն: Մենք առաջնորդվում ենք այն իրողությամբ, որ տնտեսական խնդիրների լուծումն իր ուղղվածությամբ համընկնում է սոցիալական նպատակների եւ արդարության ապահովմանը:

Այսպես երկար կարելի է շարունակել, սակայն այս անգամ բավարարվենք այսքանով: Բավարարվենք այն համոզվածությամբ, որ ցանկության դեպքում ընկալելի ենք, պարզ ու մատչելի: Որ բոլոր նրանք, ում համար իսկապես թանկ են մեր ազգային արժեքներն ու դիմագիծը եւ այն փոփոխված ու նորովի տեսնելու իրական նպատակը, կանգնեն մեր կողքին: Պաշտպանեն այն գաղափարախոսությունն ու գործելաոճը, որը թեեւ դանդաղ, աստիճանաբար, սակայն հաստատուն ու նպատակասլաց կտանի տեսանելի եւ իրականությունից չկտրված ապագա: Այսինքն՝ տեր կանգնեն դարից ավելի մեզանում քննություն բռնած ազատական ռամկավարական արժեքներին ու այնքան թանկ մեր «բրենդներից» մեկին՝ Ռամկավար ազատական կուսակցությանն ու նրա դավանած սկզբունքներին:

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**
**տգթ, ՌԱԿ ատենադպիր**

# Միջազգային

# «Հզբոլլահի» ինչի՞ն էր պետք պայթեցնել Գաբալան 2007-ին

Իսրայելի հայտնի պարբերականներից մեկը՝ «Հաարեցը», օրերս հոդված էր հրատարակել, որտեղ պատմում է «ահաբեկչական կազմակերպություն» ճանաչված «Հզբոլլահի» նախագծած «ահաբեկչական գործողությունների» մասին: Հրեական պարբերականը տեղեկացնում է, որ «Հզբոլլահը» նախատեսել էր կազմակերպել Ադրբեջանի Գաբալայի շրջանում տեղակայված ռադիոլոկացիոն կայանի պայթեցումը: Թերթը մանրամասնում է, որ դեռեւս 2007-ին «Հզբոլլահը» նախագծել էր «ահաբեկչական գործողություններ» Բաքվում՝ «հրեական օբյեկտների վրա». «Բայց պարզվում է, որ ահաբեկիչների թիրախը ոչ միայն հրեական օբյեկտներն են եղել, այլեւ Գաբալայի կայանը, որն, ի դեպ, Մոսկվան առաջարկել է ԱՄՆ-ին՝ Իրանի գործողությունները վերահսկելու համար», գրում է «Հաարեցը»:

Թերթը հիշեցնում է նաեւ, որ 2012-ին «Հզբոլլահի» «ահաբեկիչները» ծրագրել էին Բաքվում Իսրայելի դեսպան Միխաել Լոթեմի սպանությունը. «Երեք կասկածյալները՝ Ռասիմ Ալիեւը, Ալի Հուսեյնովը եւ Բալաղարդաշ Դադաշովը, մեծ քանակությամբ զենք եւ պայթուցիկ սարքեր էին բերել Իրանից Ադրբեջան: Զինամթերքը պահված էր Բաքվից 150 կմ հեռավորության վրա», գրում է հրեական պարբերականը: «Հաարեցի» ուշադրությունից չի վրիպել նաեւ այն հանգամանքը, որ 2009-ին Լիբանանի քաղաքացի Ալի Մուհամմեդը իրեն մեղավոր ճանաչեց Բաքվում Իսրայելի դեսպանատունը պայթեցնելու փորձ կատարած լինելու համար. «Այդպիսով Ալի Մուհամմեդը փորձում էր վրեժխնդիր լինել «Հզբոլլահի» առաջնորդներից մեկի՝ Իմադ Մուգնիեի սպանության համար: «Ալի Մուհամմեդը խոստովանել էր, որ իրեն հանձնարարել էին գալ Բաքու Իսրայելի դեսպանատունը պայթեցնելու հրահանգով: Սակայն այս փորձը ձախողվեց: Մուհամմեդը ձերբակալվեց, ինչպես նաեւ ձերբակալվեցին նրա հետ գործող Ադրբեջանի 4 քաղաքացիներ, երբ խմբավորման մի շարք անդամներին հաջողվեց թաքնվել», գրում է պարբերականը:

Ի՞նչ է սա նշանակում, այսինքն ինչո՞ւ է հրեական ազդեցիկ պարբերականը հիշեցնում Ադրբեջանում հակահրեական «ահաբեկչությունները»՝ տալով նաեւ Բաքվի համար խիստ մտահոգիչ մեսիջ, թե որ իսրայելական օբյեկտները հարեւան երկրում ամենեւին էլ ռազմական նշանակության չեն, սակայն այդ պարագայում ինչո՞ւ են այդ օբյեկտները անհանգստացնում «Հզբոլլահին»: Ստացվեց, ուրեմն, որ հարեւան երկրում կամ իսրայելական ռազմական ներկայություն կա, ինչի «կործանված ապացույց» կարող ենք ներկայացնել ԼՂՀ հակաօդային պաշտպանության զորքերի ոչնչացրած հրեական ծագմամբ ադրբեջանական անօդաչու ինքնաթիռը, կամ Ադրբեջանում կան իսրայելական օբյեկտներ, որոնք գործնականում ռազմական առաքելություն ունեն:

Հաշվի առնելով, որ Ադրբեջանի ռազմական դոկտրինում էլ Իրանը դիտարկվում է որպես հիմնական սպառնալիք, ու այս երկու մահմեդական երկրների հարաբերությունները, մեղմ ասած, փայլուն չեն, գումարած, որ Ադրբեջանում դեռ սովետական ժամանակներից միշտ էլ հրեական տարրն ազդեցություն ունեցել է, ապա ստացվում է, որ Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանը ամենեւին էլ դիվանագիտություն չի խաղում, երբ ասում է. «Բաքվում ես զգում եմ ինձ ինչպես իմ տանը»:

Այս համապատկերում խիստ ուշագրավ են դառնում «Հաարեցի» տեղեկությունները, որ հակաիսրայելական կազմակերպությունների թիրախ է եղել նաեւ Գաբալայի կայանը: Ընդ որում՝ 2007-ին դեռեւս: Սա նշանակում է, որ Գաբալայի ռադիոլոկացիոն կայանը հակաիսրայելական ուժերը ցանկացել են պայթեցնել այն ժամանակ, երբ դեռեւս առանց խոսակցությունների գործարկում էին ռուսները, որոնք, բնականաբար, չեն կարող եւ չեն ցանկանա այս տարածաշրջանում հակաիրանական քայլեր ձեռնարկել, որոնք ինքնաբերաբար կդիտարկվեն որպես Գաբալայի կայանը հակաիսրայելական խմբավորումների «հետաքրքրությունների կենտրոնում է»:

Նախ եթե հրեական պարբերականը նշում է, թե «Հզբոլլահը» ցանկացել է վերացնել «Ադրբեջանում իսրայելական օբյեկտները», ուրեմն Ադրբեջանում իսրայելական օբյեկտներ իրոք կան: Սա հստակ ուշագրավ է նաեւ այն առումով, որ ըստ հարեւան երկրի սահմանադրության՝ Ադրբեջանում չի կարող լինել այլ պետության ռազմական կամ այդ նշանակության բազա: Անշուշտ, հնարավոր է, արեւմտամետ: Հետեւաբար կամ «Հաարեցը» ժամանակագրության սխալ է թույլ տվել, կամ փորձում է այդպիսով թշնամանք սերմանել մահմեդական աշխարհի (չխառնել Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ - Հ. Ա.) ու Մոսկվայի միջեւ, կամ էլ պարզապես մեսիջ է տվել Բաքվին, որ Գաբալան այսօր էլ ահաբեկիչների թիրախն է, քանի որ, ինչպես պարբերականն է ընդգծում կայանի վերաբերյալ՝ «...որը, ի դեպ, Մոսկվան առաջարկել է ԱՄՆ-ին՝ Իրանի գործողությունները վերահսկելու համար»:

Իսկ մեսիջի իմաստը կարող է լինել, օրինակ, հետեւյալը: Ճիշտ է, հրեաները նախազգուշացնում են Բաքվին, որ Գաբալան ռուսներից վերցնելն ու ամերիկացիներին հանձնելը կարող է բերել ահաբեկչական վտանգ, սակայն Իսրայելն ու ԱՄՆ-ը Գաբալան դիտարկում են նաեւ որպես «Իրանին վերահսկելու միջոց», հետեւաբար Բաքուն այլընտրանք այնքան էլ չունի: Հակառակ պարագայում հրեական թերթը չէր ընդգծի մի բան, որը չի եղել ու չի կարող լինել. ռուսները, այն էլ Հարավային Կովկասում, չեն կարող հզոր օբյեկս հանձնել ամերիկացիներին՝ Իրանին վերահսկելու համար, եթե միայն ռուսներն արդեն իսկ չունեն «հակաիրանական վերահսկողություն իրականացնող օբյեկտին» վերահսկող նոր օբյեկս նոր տեղանքում:

Ինչեւէ, եզրակացնելով նշենք, որ հրեական պարբերականի այս հրապարակումը այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, ուրեմն սա մեսիջ է: Սակայն եթե այս ամենն իրականություն է, ուրեմն հերթական անգամ ապացուցում է Բաքվի հակաիրանական ցանկություններն ու պլանները, այն էլ երրորդ, Իրանի համար «պատմական չարիք» պետության ներկայությամբ: Չնայած, անգամ եթե սա իրականություն չէ, միեւնույնն է, չի հերքում Ադրբեջանում «իսրայելական օբյեկտների» առկայությունը, եւ բնականաբար, հրեաները հարեւան երկրում «Ղարաբաղը ագրեսոր հայերից ազատագրելու համար չեն», եւ էլ ավելի կարող են ակտիվանալ, երբ Արեւմուտքը վերջապես «Սիրիայի հարցը լուծի» ու անցնի «բուն խնդիր» Իրանին, ինչը, հետեւաբար նաեւ «իսրայելական օբյեկտների» ակտիվացում Ադրբեջանում ռուսները թույլ տալ չեն կարող:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

## «Իսկանդեր»-ները կդառնան ՌԴ հրթիռային խմբավորման հիմքը

**«Իսկանդեր-Մ» օպերատիվ-տակտիկական հրթիռահամալիրները պետք է դառնան ՌԴ ցամաքային զորքերի հրթիռային խմբավորման հիմքը: Այս մասին է արտահայտել վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը Կոլոմնայում երեկ անցկացված խորհրդակցության ժամանակ: «Իսկանդեր»-ները պետք է դիմակայեն Եվրոպայում տեղաբաշխված հակահրթիռային համակարգին: Ռուսական բանակի վերազինման նպատակով պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների արդիականացման նպատակով նախնական փուլում կհատկացվի 40 մլրդ ռուբլի:**

**Մեդվեդեւը նշել է, որ համալիրը «անկասկած, իր կարգում ամենաարդյունավետներից մեկն է եւ զգալիորեն գերազանցում է արտասահմանյան նմանակներին»: Վարչապետի խոսքերը մեջբերում է ՌԻԱ գործակալությունը:**

**Ըստ Մեդվեդեւի, ֆինանսավորման նախատեսվող պայմաններում պետք է ստեղծվի «գործընկերության հիման վրա արտադրության մշտական նորացման մեխանիզմ»:**

**Կառավարության ղեկավարն ընդգծել է, որ պետության պաշտպանական պատվերի ձեւավորման ժամանակ անհրաժեշտ է անցնել համալիր պայմանագրերի կիրառմանը: Խորհրդակցության ընթացքում վարչապետը դիմել է Մոսկվայի մարզի նահանգապետ Սերգեյ Շոյգուին, հիշեցնելով, որ միայն տվյալ տարածաշրջանում 70-ից ավելի ձեռնարկություններ ընդգրկված են պաշտպանական արդյունաբերության պետական պատվերների ցանկում: Այդ ձեռնարկությունները գտնվում են մարզի 32 քաղաքներում: Վարչապետը խոստացել է մի շարք խորհրդակցություններ անցկացնել պաշտպանական-արդյունաբերական համալիրի արդիականացման հարցերի վերաբերյալ:**

**Մեքենաշինության նախագծային բյուրոյում մշակված «Իսկանդեր» օպերատիվ տակտիկական հրթիռահամալիրները թողարկվում են 2 տարբերակով՝ «Իսկանդեր-Մ» եւ «Իսկանդեր-Է»: Արտահանական տարբերակը մարտական բնութագրերով փոքր-ինչ տարբերվում է ՌԴ պաշտպանության նախարարության պատվերով պատրաստվող տարբերակից. մեկնարկային զանգվածը 3800 կգ է, օգտակար բեռնվածության զանգվածը 480 կգ: Համալիրը կարող է թիրախներ խոցել մինչեւ 280 կմ հեռավորության վրա («Իսկանդեր-Մ»-ն՝ մինչեւ 500 կմ), ըստ որում մեկ րոպե միջակայքով կարող է գնդակոծել 2 տարբեր թիրախներ: Հրթիռի թռիչքի հետագիծը բալիստիկական չէ եւ դժվար կանխատեսելի է հակառակորդի համար: Հրթիռը կառավարվում է ամբողջ թռիչքի ընթացքում:** **Պ. Ք.**

ԴԱՄԱՍԿՈՍ

## «Ասադի քիմիական զենքը սահմանամերձ օդանավակայաններում է»

### *Քրիստոնյաներն աստիճանաբար ներքաշվում են հակամարտության մեջ*



**Սիրիայի իշխանությունները քիմիական զենքը տեղաբաշխել են սահմանամերձ քաղաքների օդանավակայաններում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով սիրիացի ապստամբների «Սիրիական ազատ բանակի» հրամանատարությանը:**

**Խռովարարների ներկայացուցիչները հավաստել են, թե իրենց հայտնի են բոլոր այն վայրերը, ուր իշխանությունները տեղափոխել են քիմիական զենքը եւ զինամթերքի պատրաստման սարքավորումները: Այդ քայլի շնորհիվ նախագահ Բաշար Ասադի վարչակարգը հույս ունի ճնշում գործադրել համաշխարհային ընկերակցության վրա, գտնում են «Սիրիական ազատ բանակում»:**

**Նախօրեին Սիրիայի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ջիհադ Մաքդիսին հայտարարել էր, որ իր երկիրը կարող է քիմիական զենք կիրառել օտարերկրյա միջամտության դեպքում: Միաժամանակ պաշտոնյան ընդգծել էր, որ կառավարությունը ոչ մի պայմանով քիմիական զենք չի կիրառի իր քաղաքացիների դեմ: ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման այդ կապակցությամբ հայտարարել էր, որ Բաշար Ասադը պետք է հանդես բերի առավելագույն պատասխանատվություն եւ հրաժարվի քիմիական զենքի գործադրման մտքից: Օբամայի խոսքերով՝ գործադրումը կլինի «ողբերգական սխալ»:**

**Երեկ այս մասին արտահայտվեց նաեւ ՌԴ ներկայացուցիչը, Դամասկոսից պահանջելով ոչ մի դեպքում չօգտագործել քիմիական զենք:**

**Ինչ վերաբերում է Սիրիայի բնակչության գրեթե 10 տոկոսը կազմող քրիստոնյաներին, «Ուոլ սթրիթ ջոռնըլ» թերթը գրում է, որ այդ երկրում մղվող քաղաքացիական պատերազմին քրիստոնյաները մինչեւ վերջերս չէին մասնակցում, սակայն հակամարտությունը որոշակի կրոնական երանգ է ստանում: Պատերազմում կողմերից մեկը նախագահ Ասադին պաշտպանող մահմեդական ալավիների կրոնական խումբն է: Ընդդիմության շարքերում գերիշխում են սուննիները, որոնք կազմում են Սիրիայի 23 միլիոնանոց բնակչության մոտավորապես 70 տոկոսը:**

**Մինչեւ վերջերս քրիստոնյաները չեզոքություն էին պահպանում կամ հակված էին դեպի նախագահ Ասադը, որը ներկայանում էր որպես կրոններից բարձր կանգնած աշխարհիկ առաջնորդ: Սակայն անցյալ շաբաթավերջին կառավարությունը սկսեց զենք բաժանել Դամասկոսի եւ Հալեպի քրիստոնեական թաղամասերի բնակիչներին: Երկրի այդ երկու խոշորագույն քաղաքներում ներկայումս շարունակվում են կառավարական զորքերի եւ ապստամբների կատաղի մարտերը:**

**Ըստ երեւույթին, քրիստոնյաներին այլ բան չի մնում, բացի զենք վերցնելուց: Պատճառը վերջին ամիսներին շարունակվող առեւանգումների, սպանությունների եւ սպառնալիքների ալիքն է Քուսայր քաղաքում, որտեղ մինչ այդ տարբեր կրոնների ներկայացուցիչները դարերով խաղաղ ապրել էին կողք կողքի: Այդ հակաքրիստոնեական քայլերը ակնհայտորեն ցույց են տալիս, թե քրիստոնյաների հետ ինչ կարող է պատահել ապագայում, երբ Ասադի կառավարությունը տապալվի, գրում է ամերիկյան թերթը:**

**Լարվածությունը խորացավ անցած շաբաթ օրը, երբ Դամասկոսում սպանվեց բրիգադային գեներալ, քրիստոնյա Նաբիլ Զուգեյբը: Թերթը նշում է, որ զենք վերցնելով՝ քրիստոնյաները փաստորեն պաշտպանում են կառավարությանը եւ այդպիսով ինքնաբերաբար դառնում ապստամբների թիրախ: Ուստի Սիրիայում սպասվում է հակամարտության հետագա խորացում:**

## Լիբանանում առեւանգվել են սիրիացի ընդդիմադիրներ

Լիբանանում պատանդ են վերցվել սիրիացի մի խումբ ընդդիմադիրներ: Նրանց առեւանգման պատասխանատվությունը ստանձնել է «Ռոսի ալ Մուխտարա աս Սակաֆի» անհայտ կազմակերպությունը:

Տեղական «Մայադին» հեռուստաալիքով տարածված հայտարարության մեջ առեւանգիչները «Սիրիական ազատ բանակից» պահանջում են ազատ արձակել 11 շիա ուխտավորներին, որոնք մայիսի 22-ին Հալեպից հյուսիս առեւանգվել էին թուրք-սիրիական սահմանը հատելուց հետո:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը մեջբերում է հուլիսի 22-ին «Սիրիական ազատ բանակի» ներկայացուցչի արած այն հայտարարությունը, թե «շիաները ազատ կարձակվեն միայն Բաշար Ասադի վարչակարգի անկումից հետո»:

Ավելի վաղ սիրիացի ընդդիմադիր առեւանգիչները իբրեւ նախապայման պահանջել էին, որ շիաների «Հզբոլլահ» խմբավորման գլխավոր քարտուղար շեյխ Հասան Նասրալլահը «հրապարակավ ներողություն խնդրի» Սիրիայի կառավարությանն աջակցելու համար:

ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Էգոյանը գերծանրաբեռնված է աշխատում



Շնորհիվ իր նոր ֆիլմի ֆինանսավորման ճգնաժամերին, ճանաչված ռեժիսոր Ատոմ Էգոյանը կարողացել է հաղթահարել աշխատանքային գերծանրաբեռնվածության դժվարությունները: «Չգիտեի ինչ անել», խոստովանել է նա, բացատրելով, որ «Սատանայի հանգույցը» ֆիլմի նկարահանումները Նոր Օռլեանում համընկնում էին Չառլստոնում «Ֆենգ Յի Տինգ» չինական օպերայի բեմադրության հետ: Վերջինս Գուո Ուենյինգի օպերան է, որ մայիսի 20-ին պետք է մասնակցեր այնտեղ կայանալիք Սպոլետո փառատոնին: Դրանից հետո նույն օպերան պետք է ներկայացվի Նյու Յորքի Լինկոլն կենտրոնում ամռանը նախատեսված փառատոնի շրջանակներում: Գրեթե միաժամանակ նա բեմադրել էր Կանադայում բրիտանացի դրամատուրգ Մարտին Քրիմպի «Դաժան եւ քնքուշ» պիեսը:

Ինչ վերաբերում է ֆիլմին, «Սատանայի հանգույցը» (Devil's knot) հիմնված է Մարա Լեւերիտի 2002 թվականին լույս տեսած բեսթսելլերի վրա: Գիրքը պատմում է 1993-ին Արկանզասում երեք ութ տարեկան երեխաների սպանության եւ երեք անմեղ պատանիների 18 տարվա բանտարկության դատավճռի մասին: Ի դեպ, այդ անմեղ պատանիներից երկուսը, 18 տարի բանտում անցկացնելուց եւ ազատ արձակվելուց հետո այժմ դարձել են ֆիլմի գործադիր պրոդյուսերները: Ֆիլմում նկարահանվելու համար Էգոյանը դարձյալ հրավիրել է բրիտանացի դերասան Քոլին Ֆըրթին, որի հետ համագործակցել էր «Որտեղ ճշմարտությունն է թաքնված» իր նախորդ ֆիլմի ժամանակ: Ֆըրթը կատարելու է մասնավոր խուզարկու Ռոն Լաքսի դերը: Իսկ սպանված երեխաներից մեկի մոր դերով հանդես է գալու Ռիզ Ուիթերսփունը, որը տասը տարի առաջ Քոլին Ֆըրթի խաղընկերն էր «Լրջախոհ լինելու կարեւորությունը» ֆիլմում` ըստ Օսկար Ուայլդի համանուն պիեսի: Դերի մեջ մտնելու համար Ռիզը երկար ժամանակ անցկացրել է սպանված երեխայի իսկական մոր եւ ընտանիքի մյուս անդամների հետ: Ֆիլմի նկարահանումները սկսվելու են հունիսի 25-ին Ատլանտայում: Գրքի էկրանային տարբերակի սցենարը գրել են Պոլ Բորդմանը, Սքոթ Դեթիկսոնը եւ Ատոմ Էգոյանը:

Իր գերլարված ծրագրերի հետեւանքով հայազգի տաղանդավոր ռեժիսորը ստիպված է եղել մեկ տարով հետաձգել իր հաջորդ` «Գիշերվա թագուհին» վերնագրով հոգեբանական թրիլլերի նկարահանումները: Այս մասին տեղեկացրել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հ. Ծ.

# Հայ երաժշտության երեկո «Մերկազ Յուվալում»

Երեկ աշխուժություն էր տիրում Հայֆայի «Մերկազ Յուվալ» (Յուվալ կենտրոն) երաժշտական հաստատությունում: Պատճառը կենտրոնի աշակերտների տարեվերջյան ավարտական քննությունները էին: Դահլիճը լեփ-լեցուն էր պատանի երաժիշտներով եւ նրանց աջակցելու եկած ծնողներով, նամանավանդ` պապիկ - տատիկներով: Իր ղեկավարած դասարանը ներկայացնում էր Երեւանի Կոմիտասի անվան պետ. կոնսերվատորիայի պրոֆեսոր, անվանի փողհար Յուրի Բալյանի սան, հայֆայաբնակ **Արմեն Ասլանյանը**: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ այդ քննական երեկոյի համերգում հնչեց միմիայն հայ երաժշտություն, մասնավորապես մեծն Ալեքսանդր Հարությունյանի Կոնցերտը փողի եւ նվագախմբի համար (դաշնամուրային փոխադրմամբ) եւ հայֆայաբնակ կոմպոզիտոր Նուբար Ասլանյանի Փողի եւ լարայինների համար հեղինակած Կոնցերտինը (դաշնամուրային փոխադրումով), Ալբոմ փողի եւ դաշնամուրի համար, նաեւ, չորս փողի համար հեղինակած Էլեգիան` նվիրված վաղամեռիկ փողհար Արթուր Բալյանի հիշատակին:

Յուրաքանչյուր կատարումից հետո հնչում էին բուռն ու ոգեւորված ծափահարություններ, եւ բնական էր, որ երաժիշտ կատարողների հարազատները իսկույն առանձնանում էին, քանզի դահլիճը ծափահարում էր նաեւ նրանց: Համերգն ավարտվեց «ընտանեկան» մեծ հավաքույթով` քաղցրավենիքի սեղանի շուրջ, որը ընթացավ կարծիքների ջերմ փոխանակմամբ` գովասանքի խոսքերի հղումով, թե՛ կատարողների ու նրանց ղեկավարի, եւ թե՛ իրենց համար անծանոթ, բայց հաճելի եւ ընդունելի հայ երաժշտության հասցեին:

Իսկ վերջում Արմեն Ասլանյանը պատանի երաժիշտներին հանձնեց իրենց իսկ կատարած Իսրայելի երաժշտական կենտրոնում լույս տեսած ստեղծագործությունների մեկական օրինակ` հեղինակի մակագրությամբ (հիվանդության պատճառով կոմպոզիտորը ներկա չէր):

Արժե նշել, որ հայկական փողային կատարողական դպրոցից ստացած իր գիտելիքները Արմեն Ասլանյանը ներդրել եւ շարունակում է իրագործել նաեւ Հայֆայի ջազ եւ սիմֆոնիկ նվագախմբերում, իսկ Նուբար Ասլանյանի Իսրայելում լույս տեսած հիսունից ավել ստեղծագործություններից շատերը կատարվում են երկրով մեկ, նաեւ Հայաստանում, Բուլղարիայում, Գերմանիայում, Շվեդիայում եւ մասնավորապես Հարավային Կորեայում, ուր Լեհաստանի ռադիոյի երգչախումբը հայերեն բնօրինակով կատարեց կոմպոզիտորի «Բերքի տոն» կանտատը, ասիական եւ խաղաղօվկիանոսյան գոտու տասներկու երկրների երաժշտական փառատոնում, ինչով եւ հպարտ է մեր հայ համայնքը:

ԴԱՎԻԹ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Հայֆա, Իսրայել

# Վենետիկյան թափառումներ` գունային համանվագներում

Մխիթարյան միաբան հայր **Հարություն Պզտիկյանի** համար Հայաստանը հոգեկան անհրաժեշտություն է. սիրում է տեղի մարդկային շփումների, միջավայրի ջերմության մեջ լինել, հայ մշակույթը, գիրը նրա հոգու տունն է, հայրենիքը: Մի անգամ առիթ ունեցա նկատելու, թե ինչպես հանդարտորեն, մեղմ պատասխանում էր եվրոպական կյանքի տարբեր կողմերին վերաբերող երիտասարդների` իրեն ուղղված հարցերին, շատ դյուրորեն ու հանգիստ փոխանցում եվրոպական ապրելակերպի իր փորձառությունը, եւ ինչ զարմանալի փոփոխություն կատարվեց, երբ սկսեց ներկայացնել հայաստանյան եկեղեցիների մասին պատմող հեղինակային իր ֆիլմաշարը. ձայնի ինչպիսի զվարթություն ու հոգեկան կենսունակություն արթնացավ մեջը: Հայ գրի ու դպրության մշակ, իր ժողովրդի ու նրա եկեղեցու պատմության գիտակ, տասնյակ գրքերի ու բազմաթիվ հաղորդաշարերի հեղինակ, որոնք ոչ միայն հայկական, նաեւ արտերկրի (Իտալիա, Ֆրանսիա) հեռուստակայաններով են հեռարձակվել` պատմելով հայ հոգեւոր նշակույթի, հոգեւոր ճարտարապետության առանձնահատկությունների մասին, նկատելով դրանց եզակի դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:



Հայր Հարությունը հրաշալի պատմող է ու էսսեիստ` հրապարակախոսի դիտողունակ, թափանցող հայացքով` միջավայրի, շրջապատող իրականության դառը, խոցելի երեւույթները երբեք չշրջանցող, նրբահումոր, փափուկ, բայց դիպուկ քննադատությամբ: Եվ իհարկե` ուսուցիչ է, Մխիթարյան միաբանության տարբեր վարժարաններում տասնյակ տարիներ սերունդներ է կրթել հայկականության ոգով եւ աշակերտների ու նրանց ծնողների երախտագետ վերաբերմունքին արժանացել:

«Բախտ եմ ունեցել տեսնելու իր ապրելակերպը իր ղեկավարած վարժարանում, տեսնել իր կյանքի գործը` որ հայապահպանությունն է, թե ինչպիսի սիրով է նա տրամադրում տարածքը հայկական կազմակերպություններին այն հիմնարկի, որ այսօր պատիվ ունի ղեկավարելու եւ այդ հիմնարկը պատիվ ունի իր պես ղեկավար ունենալու: Ինչպես են գալիս մանուկները այնտեղ ու դառնում հայ: Ֆրանսիայում դժվար է, շատ դժվար է հայությունը պահպանել. մեծ սեր, մեծ ջանքեր են պետք եւ հենց այսպիսի մարդիկ, առաջնորդներ են հարկավոր», «Մոսկվա» կինոթատրոնում կայացած Հարություն Պզտիկյանի ցուցահանդեսին ջերմորեն արձագանքեց **Կարեն Աղամյանը**:

«Երախտագիտությամբ պետք է հիշել այն գործիչներին, հայ կրոնավորներին, ովքեր Մխիթար Սեբաստացու հետ 300 եւ ավելի տարի առաջ ստեղծեցին այս կենտրոնը, որ մինչեւ այսօր ծառայում է` եվրոպական երկրներին ներկայացնելու մեր մշակույթը, հայ ազգի ոգին:

Մի քանի օր առաջ 200-ամյակն էր Հովի. Այվազովսկու եղբոր` Գաբրիել Այվազովսկու, որը 11 տարեկանում գնաց սովորելու Սբ Ղազար եւ 30 տարեկանում պատմական գրքերի, բազմաթիվ թարգմանությունների հեղինակ, լուսավորության առաքյալ էր: Եվ 1850-ականներին նա գնում է Փարիզ ու Փարիզում դառնում ճիշտ այն դպրոցի ղեկավարը, որի տեսուչն է այսօր մեր սիրելի բարեկամը:

Կարելի է պատկերացնել, որ կրոնական աշխարհի մարդը, պատմական բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակը դպրոցը ղեկավարելուն զուգահեռ երբ մենակ է, շարունակում է նկարչության հանդեպ իր սերը, կարողանում է նկարների մեջ զգացնել տալ իր երազային աշխարհն ու արդիական ոճի մտածումները». սա **Շահեն Խաչատրյանի** կարծիքն էր:

Եվ **Հակոբ Հակոբյանը**` արժեւորման ու հարգանքի իր մշտական վերաբերմունքն ունի հանդեպ Մխիթարյան վարդապետի անձն ու գործունեությունը. «Շատ աշխույժ, կյանքով լեցուն արվեստ է: Բացառիկ անհատականություն է, ոչ միայն որպես նկարիչ: Երկու ձեռքերի մատները շատ են, որ գտնենք մեր ժամանակների մեջ այսպիսի անհատականությունների, զարգացած, բազմաթիվ լեզուների տիրապետող հայագետ, հայ մշակույթն այսպես իմացող մտավորական»:

Հայաստանում հայր Հարությունը համակիրների լայն շրջանակ ունի, վաղուց, շատ վաղուց նրանք կան, շատ են այսօր երիտասարդները հատկապես: Նրանց մի մասը ներկա էր ցուցահանդեսին, որ կազմակերպվել է «Մոսկվա» կինոթատրոնի ղեկավարության բարեհաճ աջակցությամբ եւ կրում է «Վենետիկյան թափառումներ» խորագիրը, որի բանաստեղծականությունը հեղինակի արտիստիկ խառնվածքն է մատնում. «Ես վարդապետ եմ, նկարիչ չեմ», ասում է մեղմորեն ժպտալով, բայց միեւնույն ժամանակ ավելացնում, թե հայ մշակույթը, արվեստը, մանրանկարչությունը ուրիշ էլ որտեղ են ծաղկել, եթե ոչ մեր վանքերում ու վանական դպրոցներում, որ հայ եկեղեցին, հայ վանականը այդ արվեստի հովանավորն ու դրա կրողն է միշտ: Իտալիայում, Ֆրանսիայում շփումները տեղի արվեստի միջավայրի հետ, բարեկամական կապերը իտալացի վարպետների, հետագայում Փարիզում` Պիկասոյի, Մատիոյի հետ իրեն իհարկե հարստացրել են. «Իրենք հասուն նկարիչներ էին, ես` երիտասարդ վարդապետ,- պատմում է: -Օրերից մի օր Պիկասոն ըսավ` Վարդապետ, ինչո՞ւ չես նկարեր: Ըսի` Մետր, կարելի բան է, որ հայ վանական մը արվեստագետ չըլլա: Իմ առաջին ցուցահանդեսը Փարիզի մեջ Պիկասոն հովանավորեց» ու շարունակում. «Նպատակս ցուցահանդես ընելը չէ, նպատակս արվեստագետ, մտավորական բարեկամներս շուրջս հավաքել եւ 75-ամյակս տոնել», հետո ավելացնում է, որ օգոստոսին էլ Վենետիկ պիտի գնա` վարդապետական օծման 50-ամյակը նշելու, հետն էլ ժպիտով նայում Սփյուռքի նախարարի կողմից նոր շնորհված «Արշիլ Գորկի» շքանշանին:

Պատերից լուռ հետեւում են նկարների աչքերը` գույների համանվագ ստեղծելով շուրջը - բանաստեղծական թափառումների, ներքին մենախոսությունների, լույս ու ստվերի արձագանքներ` երբեմն հոգեկան ներդաշնակության զգացողությամբ, երբեմն` մարդկային ներապրումների, հոգեւոր ու աշխարհիկ պայմանականությունների դեմ ընդվզումի, ազատության անհավանական ու չեղած գալարումներ, իսկ հաճախ` կյանքի, միջավայրի, բնության գեղագիտական զգացողություններ, վերարտադրումներ. ընդհանրապես` ներքին հարուստ, բովանդակ կյանքով ապրողի մտածումներ, զգացումներ` գունագծային մակերեսների երազներին, որոնց խորքը, այլ հորիզոններում է պետք փնտրել:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Թեքեյան մշակութային կենտրոնում Yerevan Voices կանանց երգչախմբի բարեգործական երեկո-համերգը

**Yerevan Voices կանանց երգչախումբը հիմնադրվել է 1994-ին` դիրիժոր եւ երաժշտագետ Հասմիկ Վարդանյանի կողմից, տաղանդավոր դիրիժոր Արթուր Վերանյանի Երեւանի կամերային երգչախմբի հիման վրա: 1992-ին, 15 տարիների փայլուն գործունեությունից հետո, երգչախումբը լուծարվեց` Արթուր Վերանյանի ԱՄՆ արտագաղթելու պատճառով: Դա իսկական կորուստ էր ոչ միայն երգչախմբի անդամների, այլեւ հայ երաժշտասեր հասարակության համար: Լինելով կանանց միակ երգչախումբը Հայաստանում եւ յուրատեսակ համերգային ծրագրի միակ կատարող, երգչախումբն իր ուրույն տեղն էր զբաղեցնում հայկական կատարողական արվեստի մեջ: Առաջատար սոպրանո Հասմիկ Վարդանյանը եւ երգչախմբի մնացած անդամները չկարողացան համակերպվել այն մտքի հետ, որ այդ անգնահատելի ժառանգությունը անդարձ կկորսվի: Երկու տարի նրանք հավաքվում եւ ոչ պաշտոնապես փորձեր էին կատարում: Ի վերջո, 1994-ին, երգչախմբի անդամները միավորվեցին եւ որոշեցին պաշտոնապես վերականգնել երգչախումբը եւ ամեն գնով պահպանել այդ ուրույն երաժշտական ժառանգությունը` Հասմիկ Վարդանյանի ղեկավարությամբ:**

**Համերգը կկայանա հուլիսի 26-ին, ժամը 19.30-ին, Թեքեյան մշակութային կենտրոնում (Խանջյան 50):**

**Մանրամասները` www.yerevanvoices.com կայքում:**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Յուրա Մովսիսյան. «Հաճելի է մրցաշրջանը սկսել հաղթանակով»

***Ֆուտբոլի Ռուսաստանի պրեմիեր լիգայի մեկնարկային տուրում Յուրա Մովսիսյանը գերազանց ելույթ ունեցավ Կրասնոդարի համանուն թիմի կազմում: Նրա խփած 2 գոլերի շնորհիվ «Կրասնոդարը» 2-1 հաշվով հաղթեց Կազանի «Ռուբինին»: Յուրա Մովսիսյանը 2 գնդակով «Զենիթի» հարձակվող Ալեքսանդր Կերժակովի հետ գլխավորեց ՌԴ պրեմիեր լիգայի լավագույն ռմբարկուների ցանկը: «Կրասնոդարի» կազմում ՀՀ հավաքականի հարձակվողն անցկացրած 38 հանդիպումներում արդեն 16 գոլի հեղինակ է դարձել՝ իր արդյունավետ խաղով ուրախացնելով բոլորին: Նա ընդգրկվեց մեկնարկային տուրի խորհրդանշական հավաքականում:***

***Խաղից հետո Յուրա Մովսիսյանը կարճ հարցազրույց է տվել ակումբի պաշտոնական կայքին, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:***




- Միշտ էլ հաճելի է մրցաշրջանը սկսել հաղթանակով: Իսկ «Ռուբինին» հաղթելը կրկնակի հաճելի է, քանի որ այս թիմը վերջերս նվաճել էր ՌԴ Սուպերգավաթը: «Ռուբինն» ի վիճակի է ՌԴ առաջնությունում մրցանակային տեղ զբաղեցնել: Դժվարին խաղ ստացվեց: Մենք մեր առջեւ նպատակ էինք դրել հաղթել եւ կարողացանք իրագործել այն:

**- Եղանակային պայմանները որքանո՞վ խանգարեցին թիմին ցուցադրելու իրեն բնորոշ խաղը:**

- Չնայած չափազանց շոգ եղանակին, երկու թիմերն էլ մեծ ցանկություն ունեին հաղթելու: Ուստի ձգտում էինք մեզ բնորոշ խաղը ցուցադրել:

**- Ի՞նչ նպատակներ է հետապնդում «Կրասնոդարը» նոր մրցաշրջանում:**

- Ռուսաստանի առաջնությունը բավականին ուժեղ մրցաշար է, ուստի դժվար է կանխագուշակում կատարելը: Ցանկանում ենք նախորդ տարվա համեմատ ավելի լավ հանդես գալ, ավելի ուժեղ լինել, հաղթանակներ տոնել:

**- Խաղի ընթացքում առնվազն 6 անգամ մեծ արագությամբ ճեղքեցիր մրցակցի պաշտպանությունը: Դա ֆուտբոլիստից մեծ էներգիա է խլում: Որտեղի՞ց քեզ այդքան էներգիա:**

- Ես ձգտում էի օգտակար լինել, աշխատում էի, քանի որ թիմին հաղթանակ էր անհրաժեշտ: Հիանալի է, որ բոլորիս ջանքերով թիմը հասավ իր նպատակին:

## Մարիամ Ավետիսյանն ուժեղագույնն էր տարիքային իր խմբում

Վրաստանի Փոթի քաղաքում անցկացված շախմատի Նանա Ալեքսանդրիայի գավաթի խաղարկությունում Հայաստանի պատանի շախմատիստներից առավել հաջող ելույթ ունեցավ Մարիամ Ավետիսյանը: Մինչեւ 12 տարեկան աղջիկների մրցաշարում Մարիամը 9 հնարավորից վաստակած 8,5 միավորով դարձավ մրցաշարի հաղթող: Նրան կես միավոր զիջեց 2-րդ տեղը զբաղեցրած Անի Իվանյանը: 3-րդ մրցանակակրուհին վրացի Մարիամ Դոլիձեն է:

Հայ շախմատիստուհին մրցաշարը սկսեց 5 անընդմեջ հաղթանակներով՝ առավելության հասնելով Օլգա Ստեպանովայի, Լիկա Իմնաձեի, Սալոմե Գեսուաձեի, Անի Իվանյանի եւ Հեղինե Ամիրխանյանի նկատմամբ: Միայն 6-րդ տուրում վրացի Մարիամ Դոլիձեին հաջողվեց ընդհատել Ավետիսյանի հաղթարշավը՝ պարտիան ավարտելով ոչ-ոքի: Ավարտական 3 տուրերում հայ շախմատիստուհին կրկին հաղթեց մրցակցուհիներին՝ Մարիամ Գուրջիեւին, Թամար Ժորթմենաձեին ու Եկատերինա Ցոմայային:

Մինչեւ 8 տարեկան տղաների մրցաշարում Գոռ Գրիգորյանը 9 հնարավորից վաստակած 7,5 միավորով գրավեց 2-րդ տեղը: Գոռը տոնեց 7 հաղթանակ, մեկ պարտիա ավարտեց ոչ-ոքի, իսկ միակ պարտությունը կրեց 6-րդ տուրում մրցաշարի հաղթող, վրացի Նիկոլոս Կաչարավայից: Վերջինս 100 տոկոսանոց արդյունքի հասավ՝ հաղթելով բոլոր 9 մրցախաղերում:

Մինչեւ 12 տարեկան տղաների մրցաշարում Աշոտ Փարվանյանը 9 հնարավորից վաստակելով 7 միավոր, գրավեց 2-րդ տեղը: Նա միայն լրացուցիչ գործակիցներով 1-ին տեղը զիջեց նույնպիսի արդյունք ցույց տված վրացի Գուրամ Կոկայային: Ի դեպ, մրցաշարում միակ պարտությունը Փարվանյանը կրեց հենց Կոկայայից:

## Ֆեդերերը հրաժարվել է դրոշակակրի դերից

Թենիսիստների համաշխարհային դասակարգման առաջատար Ռոջեր Ֆեդերերը հրաժարվել է դառնալ Շվեյցարիայի օլիմպիական պատվիրակության դրոշակակիրը Լոնդոնի ամառային օլիմպիադայի հանդիսավոր շքերթի ժամանակ: Նա նախկինում արդեն 2 անգամ՝ 2004-ին Աթենքում եւ 2008-ին Պեկինում եղել էր Շվեյցարիայի դրոշակակիրը: Ֆեդերերը հայտարարել է, որ ժամանակն է դրոշը տանելու պատիվը փոխանցել մեկ այլ մարզիկի:

Որոշվել է, որ դրոշակակիրը կլինի մեկ այլ շվեյցարացի թենիսիստ՝ Ստանիսլավ Վավրինկան, որը Պեկինում Ֆեդերերի հետ զուգախաղում նվաճել էր օլիմպիական չեմպիոնի տիտղոսը:

Հետաքրքրական է, որ եւս մի քանի թենիսիստներ կլինեն իրենց երկրների դրոշակակիրները լոնդոնյան օլիմպիադայում: Ռուսաստանը դրոշը վստահել է Մարիա Շարապովային, Լեհաստանը՝ Ագնեշկա Ռադվանսկային: Սերբիայի դրոշակակիրը կլինի Նովակ Ջոկովիչը, Բելառուսինը՝ Մաքսիմ Միրնին, Ռումինիայինը՝ Խորիա Տեկեուն, Կիպրոսինը՝ Մարկոս Բաղդատիսը:

## «Լոկոմոտիվը» հետաքրքրվում է Օուենով

Մոսկվայի «Լոկոմոտիվը» հետաքրքրվում է «Մանչեսթր Յունայթեդի» նախկին հարձակվող Մայքլ Օուենով: 32-ամյա ֆուտբոլիստն անցյալ մրցաշրջանում միայն մեկ խաղ անցկացրեց թիմի կազմում, իսկ առաջնության ավարտից հետո ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ ստացավ: Օուենով հետաքրքրվում են նաեւ Քաթարի «Ալ Ռայանը» եւ թուրքական «Սիվասպորը»:



Ժամանակին Մայքլ Օուենը Անգլիայի հավաքականի առաջատարն էր: Նա հիանալի ելույթ էր ունենում նաեւ «Լիվերպուլում», որի կազմում 298 խաղում 158 գոլ է խփել: 1998-ին Ֆրանսիայում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնությունում 18-ամյա Օուենը 4 խաղում 2 գոլ խփեց: Արգենտինայի հավաքականի դարպասը 1/8 եզրափակիչում նրա խփած գեղեցիկ գոլը ֆուտբոլիստին դարձրեց անգլիացի երկրպագուների սիրելին: Ցավոք, հաճախակի ստացած վնասվածքների պատճառով Օուենը ստիպված էր լինում շատ հանդիպումներ բաց թողնել: Օրինակ, 2006-ի աշխարհի առաջնությունում ստացած վնասվածքից հետո նա մոտ 1 տարի ապաքինվում էր:

2009-ին նա «Նյուքասլից» տեղափոխվեց «Մանչեսթր Յունայթեդ», սակայն այստեղ եւս վնասվածքները հետապնդում էին ֆուտբոլիստին: Այդ պատճառով նա թիմի կազմում ընդամենը 52 խաղ անցկացրեց՝ խփելով 17 գնդակ: Իսկ մրցաշրջանի ավարտից հետո ակումբը հրաժարվեց երկարաձգել պայմանագիրն Օուենի հետ:

### ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

## Նման խաղով գոլ չես խփի

**Հայաստանի չեմպիոն «Ուլիսը» դուրս մնաց չեմպիոնների լիգայի մրցաշարից՝ «Շերիֆի» հետ պատասխան հանդիպումում էլ պարտվելով 0-1 հաշվով: Երեւանյան խաղում անհաջողության մատնվելուց հետո ուլիսցիներին հյուրընկալվելիս միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Սակայն այն «անատամ» խաղը, որ ցուցադրեցին ուլիսցիները Տիրասպոլում, չէր կարող հաջողություն բերել թիմին: Ողջ հանդիպման ընթացքում «Ուլիսն» այդպես էլ մեկ գոլային պահ չստեղծեց:**

**Իսկ ահա «Շերիֆն» առանց մեծ ջանքեր գործադրելու հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց: Հանդիպման ելքը վճռեց 66-րդ րոպեին 11մ հարվածով Սամարջիչի խփած միակ գոլը: Բացի այդ, 2 անգամ «Ուլիսին» օգնության եկավ դարպասաձողը, նույնքան անգամ էլ ուլիսցիները գնդակը հեռացրին դատարկ դարպասից:**

**«Ուլիսն» արդեն 3-րդ մրցաշրջանն անցկացրեց եվրոգավաթներում, սակայն այդպես էլ չկարողացավ բացել գոլերի հաշիվը:**

## Պատանի շախմատիստի նոր հաջողությունը

**Լոս Անջելեսում անցկացված շախմատի շրջանաձեւ մրցաշարում հիանալի հանդես եկավ ԱՄՆ-ում բնակվող 11-ամյա Սամուել Սեւյանը՝ արժանանալով առաջին մրցանակին: Նա 9 պարտիաներում մնալով անպարտելի, վաստակեց 7 միավոր ու 2-րդ անգամ լրացրեց միջազգային վարպետի նորման: Սամուելը լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնքան միավոր վաստակած Յան Լիոյին:**

**Պատանի հայ շախմատիստը հաղթանակներ տոնեց Իգնասիո Սայնցի, Մարկ Դուխվորտի, Լարի Ռեմլինգերի, Տաթեւ Աբրահամյանի եւ Գարուշ Մանուկյանի նկատմամբ, հաշտություն կնքեց Յան Լիոյի, Ջանիբեկ Ամանովի, Անդրանիկ Մատիկոզյանի եւ Կեսավ Վիսվանադայի հետ:**

**5,5-ական միավորով 3-4-րդ տեղերը բաժանեցին Անդրանիկ Մատիկոզյանն ու Ջանիբեկ Ամանովը: Տաթեւ Աբրահամյանը 4 միավորով գրավեց 6-րդ տեղը, իսկ Գարուշ Մանուկյանը 3,5 միավորով հանգրվանեց 8-րդ հորիզոնականում:**

## Հաղթական մեկնարկ

**Գրոսմայստերներ Սերգեյ Մովսիսյանն ու Հրանտ Մելքումյանը հաղթանակով սկսեցին Բիլի միջազգային մրցաշարը: Մովսիսյանը սպիտակներով հաղթեց Բոգդան Բոգինովիչին, իսկ Մելքումյանը սեւերով պարտության մատնեց Ջրինկ Դեուր Սարիչին:**

**Բիլում մեկնարկեց նաեւ գրոսմայստերական մրցաշարը 6 շախմատիստների մասնակցությամբ: Մագնուս Կառլսենը հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի հետ, Վան Հաոն հաղթեց Էթիեն Բաքրոյին, իսկ Անիշ Գիրին պարտության մատնեց Ալեքսանդր Մորոզեւիչին:**

## Մկրտչյանն ու Դանիելյանը միջին դիրքերում են

**Մեկօրյա հանգստից հետո Ջերմուկում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի մրցաշարի մասնակիցներն անցկացրին 7-րդ տուրի հանդիպումները: Լիլիթ Մկրտչյանը եւ Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղացին համապատասխանաբար Բաթխույակ Մունգունտուլի ու Ժուան Լուֆեյի հետ: 7 տուրից հետո հայ շախմատիստուհիները վաստակել են 3,5-ական միավոր:**

**Աղյուսակը շարունակում է գլխավորել Ցզյուն Վենցզյունը, որը հաշտություն կնքեց Կատերինա Լահնոյի հետ: Նա վաստակել է 5 միավոր: 4,5-ական միավորով առաջատարին հետապնդում են Հոու Յիֆանն ու Ժուան Լուֆեյը: Յիֆանը միավորը կիսեց Չժան Սյուեի հետ մրցախաղում:**

**Տուրն անհաջող էր Համպի Կոներուի համար, որը մրցաշարում 2-րդ պարտությունը կրեց՝ զիջելով Նադեժդա Կոսինցեւային: Կոներուն ունի 4 միավոր: Վերջապես հաղթանակի բերկրանքը վայելեց նաեւ Նինո Խուրցիձեն, որը պարտության մատնեց Եկատերինա Կովալեւսկայային:**

**8-րդ տուրում Լիլիթը կմրցի Չժան Սյուեի հետ, իսկ Էլինայի մրցակցուհին կլինի Եկատերինա Կովալեւսկայան:**

## «Ռեալի» մարզադաշտը կանվանափոխվի




**Մադրիդի «Ռեալի» «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտի անվանումը հավանաբար փոփոխության ենթարկվի: Վերջերս ակումբը հովանավորչական հնգամյա պայմանագիր է կնքել Դուբայի Emirates ավիաընկերության հետ, որը պատրաստ է լրացուցիչ 53 մլն եվրո վճարել «Ռեալին», որպեսզի մարզադաշտի անվանումը փոփոխվի: Շատ հնարավոր է, որ շուտով մարզադաշտը ստանա Fly Emirates Bernabeu անվանումը: Իսկ ընկերության լոգոտիպը «Ռեալի» մարզաշապիկներին կհայտնվի հաջորդ մրցաշրջանում:**

**Նշենք, որ Դուբայի ավիաընկերության անվանումն է կրում Լոնդոնի «Արսենալի» մարզադաշտը:**

**Հասկանալի է, որ մարզադաշտի անվանափոխության հարցը «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը միայնակ որոշելու իրավունք չունի: Նման որոշում պետք է կայացվի ակումբի տնօրենների խորհրդի նիստում: Հիշեցնենք, որ մարզադաշտը շահագործման է հանձնվել 1947-ին եւ կրում է ակումբի նախկին նախագահի անուն-ազգանունը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Գերմանիայի կաթոլիկ եկեղեցու ուխտավորների այցը Մայր աթոռ Սուրբ Էջմիածին

Հուլիսի 24-ին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանն ընդունեց Գերմանիայի կաթոլիկ եկեղեցու մի խումբ ուխտավորների՝ առաջնորդությամբ Գերմանիայի Կաթոլիկ եպիսկոպոսների կոնֆերանսի խոսնակ Մաթիաս Քոփի:

Հանդիպման սկզբում Մաթիաս Քոփը նախ ներկայացրեց խմբի անդամներին եւ այցելության նպատակը, ապա տեղեկացրեց, որ ուխտավորներն ութ օրերի ընթացքում արդեն այցելել են Հայաստանի հայտնի պատմական վանքեր ու եկեղեցիներ:

Այնուհետեւ ուխտավորների այցը Մայր աթոռ Սուրբ Էջմիածին ողջունեց Հովակիմ սրբազանը՝ իր խոսքում նշելով, որ Հայ եկեղեցին առանձնակի սիրով է ընդունում քույր եկեղեցիների ուխտավորներին, ովքեր ցանկանում են ավելի մոտիկից ծանոթանալ հայ ժողովրդի հարուստ մշակույթին ու սրբազան ժառանգությանը եւ հաղորդ դառնալ քրիստոնեական հնագույն արժեքներին: Հովակիմ սրբազանը հյուրերին նաեւ համառոտ ներկայացրեց Հայ եկեղեցու պատմության կարեւոր դրվագները, նվիրապետական կառուցվածքը, խորհրդային շրջանում Հայոց եկեղեցու կրած դժվարությունները եւ եկեղեցի-պետություն հարաբերությունների ներկա վիճակը:

Անդրադառնալով միջեկեղեցական հարաբերություններին՝ սրբազան հայրը նշեց, որ Հայ եկեղեցին ջերմ հարաբերությունների եւ սերտ համագործակցության մեջ է քրիստոնեական եկեղեցիների հետ. տեղի են ունենում եկեղեցականների փոխայցելություններ, ուսանողների փոխանակումներ եւ բազում համատեղ կրթական եւ սոցիալական ձեռնարկներ:

Հանդիպմանը Հովակիմ սրբազանը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր աթոռ Ս. Էջմիածնի կողմից իրականացվող կրթական, քարոզչական եւ հասարակական գործունեությանը, ինչպես նաեւ ապագայի ծրագրերին:

# Հայոց ցեղասպանության ուսումնասիրման նոր հեռանկարներ Գերմանիայում

***Թարգմանաբար եւ հատվածաբար ներկայացնում ենք «Կրակե պաշի միջով: Հայաստան-Իրաք-Պաղեստին: Ցասումից հաշտեցում» գրքի հեղինակ Մուրիել Միրաք Վայսբախի վերնշյալ վերնագրով հոդվածը «Արմինյն միրոր-սփեքթեյթր» թերթից:***

Հունիսի 6-ին Գերմանիայում գործող երկու կարեւոր մշակութային հաստատություններ մի համաձայնագիր ստորագրեցին, որը կարող է նոր հեռանկարներ բացել 1915 թվականին հայերի դեմ իրագործված ցեղասպանության ուսումնասիրման գործընթացում: Պոտսդամի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի եւ «Լեփսիուսհաուս» (Լեփսիուսի տուն) հիմնարկության միջեւ ստորագրված համաձայնագիրը զուտ բյուրոկրատական գործողություն էր: Եթե երկու գործընկերները ամբողջությամբ օգտագործեն համաձայնագրում նշված հնարավորությունները, ապա նրանք կարող են նշանակալիորեն խթանել ցեղասպանության (այդ թվում նաեւ հայկականի) ուսումնասիրությունները:

«Լեփսիուսհաուսը» Պոտսդամում գործող թանգարան է եւ հետազոտությունների կենտրոն: Այնտեղ է ժամանակին ապրել դոկտ. Յոհաննես Լեփսիուսը, եւ այնտեղ է, որ տեղի ունեցավ համաձայնագրի ստորագրումը: Վերնշյալ համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան պրոֆ. Յոհան Հաֆները այդ առիթով նշեց, որ ուսանողները ամեն հնարավորությունից (գրադարան, արխիվ եւ այլն) կկարողանան օգտվել: Նա ավելացրեց, որ հատուկ ուշադրություն է դարձվելու Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը: Հալլե-Վիտենբերգ համալսարանում գործող «Մեսրոպ» կենտրոնը (ստեղծված 1998-ին) այսուհետեւ նաեւ հայկական հարցերով է զբաղվելու, իսկ Բոխումի Ռուր համալսարանում գործող Սփյուռքի եւ ցեղասպանության ուսումնասիրությունների ինստիտուտը առավել ինտենսիվ աշխատանքներ է տանելու այդ ուղղությամբ:

«Լեփսիուսհաուսը» համագործակցում է նաեւ Պոտսդամի Մենդելսոն կենտրոնի հետ, եւ այս աշնանը նախատեսվում է գիտաժողով անցկացնել՝ նվիրված Ֆրանց Վերֆելին: Հասարակության գիտական մասի ղեկավար դոկտ. Յոսֆելդի խոսքերով՝ «շատ բան արվել է, բայց շատ բան դեռ պետք է արվի»: Սեմինարների, քաղաքական դասախոսությունների եւ քննարկումների մի ամբողջ ծրագիր է մշակված հաջորդ երեք տարիների համար: Դրանցից առաջինը կայանալու է սեպտեմբերին եւ «Յոհաննես Լեփսիուս: Բացառիկ գերմանացին» խորագիրն է կրելու:

«Լեփսիուսհաուսը» պաշտոնապես բացվեց անցյալ տարվա մայիսին, Գերմանիայում թուրքական շրջանակների համառ ու երկարամյա խոչընդոտները հաղթահարելուց հետո: Արեւելյան Գերմանիայի ռեժիմի ներքո ամբողջովին քայքայված հաստատությունը հնարավոր եղավ հիմնովին վերանորոգել պետական եւ անհատական միջոցներով: Բրանդենբերգի շրջանը, որտեղ գտնվում է Պոտսդամը, միակ դաշնային նահանգն է, որտեղ պատմության ուսումնական ծրագրերն ու գրքերը ներառում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութեր:

Պրոֆ. Հաֆները աստվածաբանություն եւ փիլիսոփայություն է սովորել Օգսբուրգում (Մյունխեն) եւ Ֆիլիպիններում: 1998-2001 թվերին դասավանդել է Դեյտոն համալսարանում: 2004-ից Պոտսդամում կրոն է դասավանդում: 2010-ին նշանակվել է փիլիսոփայության բաժնի դեկան: Պրոֆ. Հերման Գոլցին փոխարինած դոկտ. Յոսֆելդը գերմանական պատմություն, գրականություն եւ փիլիսոփայություն է ուսանել Ֆրանկֆուրտում եւ Բեռլինում: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների եւ 20 գրքերի, որոնցից մեկը «Նեմեսիս» գործողության մասին է:

Հ. Ծ.

# Հայաստանի ազդեցությունը Եվրոպայի վրա

«Միշըն Հիլզում» (Կալիֆոռնիա) գործող «Արարատ-Էսքիճյան» թանգարանում հունիսի 3-ին ցուցադրվել է Արսեն Հակոբյանի նոր՝ «Արարատից Եվրոպա» տեսաժապավենը, որը պատմում է Եվրոպայի վրա Հայաստանի ունեցած ազդեցության մասին, ինչպես քրիստոնեության տարածման, այնպես էլ եկեղեցական ճարտարապետության բնագավառներում:

Հայաստանում, Վրաստանում եւ եվրոպական մի շարք երկրներում նկարահանված ֆիլմը, որը կարելի է դիտել բացի հայերեն տարբերակից նաեւ անգլերեն, ֆրանսերեն եւ ռուսերեն լեզուներով, Միլանի Սան Սատիրո եկեղեցու օրինակն է բերում, որպես Բագարանի եկեղեցու օրինակով կառուցված շինության, նաեւ Օռլեանում (Ֆրանսիա) Ժերմինյի-դե-Պրե եկեղեցու օրինակը՝ կառուցված հայազգի Օտոն Մացայեցի ճարտարապետի կողմից (805-511 թթ.):

Ֆիլմում նաեւ բավական մեծ տեղ է հատկացված Հայաստանից Եվրոպա մեկնած քարոզիչներին, ինչպես նաեւ Եվրոպայի արվեստագետների պատմական հայկական վայրեր այցելություններին: Որպես առաջինի օրինակ բերվում է Սուրբ Մինասը, կամ իտալերենով՝ Սան Մինիատոն, որ քրիստոնեություն է քարոզել Տոսկանայում եւ գլխատվել Ֆլորենցիայում: Նրա անունով կառուցվել է եկեղեցի, որի գմբեթի որմնանկարում նա ներկայացված է որպես «Հայոց թագավոր»: Երկրորդի համար օրինակ ծառայում է Լեոնարդո դա Վինչիի Կիլիկիա, հատկապես Տավրոսի լեռներ այցելությունը 1480-ական թվականներին:

Ֆիլմը, ըստ Հակոբյանի, բոլոր նրանց համար է, ովքեր չգիտեն հայերի եւ Հայաստանի մասին: «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդմամբ՝ հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ arsen2003@yahoo.com կայքից:

Հ. Ծ.

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն տեղեկացնում է, որ այն անշարժ գույքերի աճուրդային վաճառքը, որոնք չեն իրացվել մինչեւ 31.12.2011թ.-ը եւ 01.06.2012թ.-ը, շարունակվում է 2012 թվականի ընթացքում՝ սահմանված կարգով:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել **www.flores.am**

ԱՅԺ

# ՌԴ Պետական դումայի նախագահը Երեւանում

*1-ին էջից*

Ավելի ուշ Ազգային ժողովում Նարիշկինը հանդիպեց ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին: Առանձին հանդիպումից հետո Աբրահամյանն ասաց, որ ռուս գործընկերոջ հետ քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման հարցեր՝ կրթական, գիտական եւ մի շարք այլ ոլորտներում: Պաշտոնյաները կարեւորել են միջխորհրդարանական հարաբերությունների խորացումը՝ հատկապես միջազգային խորհրդարանական հարթակներում: Համագործակցության արդյունավետություն է արձանագրվել նաեւ ՀԱՊԿ շրջանակում:

Աբրահամյանն ու Նարիշկինը քննարկել են ՀՀ ԱԺ-ում եւ ՌԴ Պետդումայում երկու խորհրդարանների ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծումը, ինչը միտված կլինի հարաբերությունների ավելի ամրապնդմանը:

Վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ ռուս պաշտոնյան քննարկել է երկկողմ տնտեսական կապերի դիվերսիֆիկացմանն ուղղված աշխատանքները: Այդ համատեքստում գործադիրի ղեկավարը տեղեկացրել է, որ ներկայում Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունները աշխատում են երկու երկրների միջեւ սոցիալ-տնտեսական համագործակցության նոր երկարաժամկետ ծրագրի նախագծի շուրջը, ուր կներառվեն համագործակցության բոլոր ոլորտները, մինչեւ 2012 թվականը նախատեսվող համատեղ ծրագրերն ու նպատակները:

Ավելի ուշ Նարիշկինն արդեն նախագահական նստավայրում էր: Նախագահ Սերժ Սարգսյանը ռուս պաշտոնյայի հետ հանդիպմանը հույս է հայտնել, որ վերջինիս այցը նոր ազդակ կհաղորդի հաստատուն կերպով զարգացող հայ-ռուսական ռազմավարական հարաբերություններին:

Նախագահի բնութագրմամբ՝ հայ-ռուսական անսասան հարաբերությունները Հայաստանի անվտանգության անկյունաքարն են: Նարիշկինն էլ հավելել է, որ Ռուսաստանը թանկ է գնահատում Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումն ու համագործակցությունը, որոնք վերջին 10 տարում ավելի են ակտիվացել:

Նարիշկինը կարեւորել է միջխորհրդարանական դիվանագիտությունը երկու երկրների հարաբերությունների ամրապնդման գործում:

Հ. Հ.

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**
**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012թ. հուլիսի 20-ի թիվ 1 արձանագրությամբ**

**Ծածկագիրը՝ "ՀՀՌՑ-ՊԸԾՁԲ-12/5"**

Պատվիրատուն՝ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում (էլ. փոստ՝ hhrc.gnumner@tna.am), հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Գնման առարկա է հանդիսանալու 01.01.2011թ. դրությամբ «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության անշարժ գույքի (շենք-շինություններ, հողամասեր) իրական արժեքի որոշման ծառայության ձեռքբերումը: Պարզեցված ընթացակարգում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության անշարժ գույքի (շենք-շինություններ, հողամասեր) իրական արժեքի որոշման ծառայության ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2012թ. նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ վերոհիշյալ հասցեով, մինչեւ ս. թ. օգոստոսի 1-ը, ժամը 12.00-ը: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձեւով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին: Մասնակիցը էլեկտրոնային ձեւով հրավեր կարող է ստանալ գնումների www. gnumner.am պաշտոնական կայքից:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին հայերեն լեզվով՝ վերոհիշյալ հասցեով, վարչական շենքի 19 սենյակ, մինչեւ ս. թ. օգոստոսի 1-ը, ժամը 12.00-ն:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է՝ հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ/կամ գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում:

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում բացված 163058561289 հաշվեհամարին:

*«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ*

**Հայտարարություն**

Ս. թ. հուլիսի 27-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողությունը կասեցնելու եւ դադարեցնելու համար եզրակացություններ տվող հանձնաժողովի նիստը:

**Օրակարգում՝**

1. ԱՁ Նվարդ Սկրտչյանին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2011թ. տրված թիվ ՊԼ-5489 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 14.07.2012թ. դիմումի քննարկում:

2. «ՅԻՆ ԱՐԵՆԻ» («ԱՐՓԱ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի իրավահաջորդը) ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից 05.04.2002թ. տրված թիվ ՊԼ-772 լիցենզիայի գործողությունը կասեցման համար հիմք հանդիսացող խախտման արձանագրված վերաբերյալ հարցի քննարկում (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

*ՀՀ ֆինանսների նախարարություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 24.7.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: